


Թ. Ի. ԿՈՂԵՐԵՐ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԴԱՍԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐ



Պահպան Գրականության գետական ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
Երևան • 1940



603 MAR 2010

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅՆ

371

4-15

ՎՐ

Մ. Ի. ԿԱԼԻՆԻԿ

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ  
ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԵՐ



ԽՐԱԿԱՆ Ա. Խ.  
ԽԱՆԱԳՈՅԾ ՕՇԽՉՈՒՆԻԿՈՎ Խ. ՕՇԽ

ՔԱՂ.ՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ • 1940

16 MAY 2013

45.560



## ՄԱՐՔՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻԶՄԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ճառ բուհերի մարքսիզմ-լենինիզմի ամբիոնների  
ղեկավարների Համամիութենական երկրարդ  
խորհրդակցուք-յանը՝ 1940 թ. հուլիսի 4-ին



Ընկերներ, այն հարցերը, որոնք քննարկվում են ձեր  
խորհրդակցությանը, այդ հարցերը խորթ չեն նաև մեղ  
համար, եթե կաբելի է այսպես արտահայտվել, գործնական  
աշխատողներիս, քաղաքադետներիս համար։ ԶԵ՞՞ որ մեր  
ամբողջ ամենօրյա աշխատանքը, մեր ամբողջ քաղաքակա-  
նությունը (թե՛ ներքին, թե՛ արտաքին) ոչ այլ ինչ է,  
բայց եթե մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների կենսագոր-  
ծությը և հետագա զարգացումը։ Վերջնական նստառակը,  
որը մենք հետապնդում ենք, որպես գործնական աշխատող-  
ներ, որպես քաղաքադետներ, —դա կոմունիզմի կառու-  
ցումն է։

Դուք դասավանդում եք բուհերում մարքսիզմ-լենինիզ-  
մի կիմունքները, առաջապոր, ուելուցիոն թեորիայով գի-  
նում եք սովետական ինտելիգենցիայի ապագա կալբերը—  
ապագա ինժեներներին, ագրոնոմներին, մանկավարժներին,  
իրավաբաններին, գրականագետներին, արտիստներին, նկա-  
րիչներին և այլն, այսինքն՝ կոմունիզմի ապագա կառու-  
ցուներին։ Եվ այն էլ ոչ սոսկ կառուցողներին, այլ հրա-  
մանատարական կազմին։ Միանդամայն հասկանալի է, որ  
սովետական ժողովուրդը կենսականորեն շահագրդոված է



740  
41

М. И. КАЛИНИН

ВОПРОСЫ КОММУНИСТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ

Государственное издательство политической литературы

Ереван • 1940

այն բանում, որպեսզի նրա ինտելիգենցիան, որպես նրա առավել որակալ մասը, աշխատի ոչ թե կուրուրեն, այլ լիակատար գիտակցականությամբ, ու լուսավորված՝ Մարքսի—էնդելսի—Լենինի—Ստալինի իդեաներով, որպեսզի նա տիրապետի իր աշխատանքում մարքսիզմ-լենինիզմի մեթոդին:

Մի ժամանակ, հեռավոր անցյալում, մենք նույնպես մարքսիզմ-լենինիզմ ենք դասավանդել: Անշուշտ, մենք տնաբույս դասատուներ էինք. մեր աշխատանքը մենք կատարում էինք ընդհատակյա ոչ մեծ խմբակներում, որոնց մեջ կային մեծ թվով սակալ գրադետ մարդիկ: Մի՛ մոռացեք ընդունին, որ մեր դասավանդումը, մեր պրոպագանդանդան դեմ էր առնում օպրոբունխատների դիմադրությանը, որոնց հարկավոր էր հակածարքած տալ: Ասենք մենք ինքներս էլ դեռևս վատ էինք խմանում մարքսիզմը, մանավանդ տեքստի տեսակետից: Բայ էության մենք ճանապարհ էինք որոնում ու հարթում երիտասարդ բանվորական շարժման համար: Զնայած այդ բոլոր աննպաստ սղայմաններին, մեր աշխատանքը, ինչպես դուք գիտեք, հաջողակ դուքս եկավ:

Մենք ունեինք մեծ պլյուս: Երբ բանվորը կամ բանվորուհին մտնում էին մարքսիստական խմբակի մեջ, ապա նրանք մտնում էին դրա մեջ ոչ թե ակադեմիական նկատառումներով, այլ հանուն իրենց կենսական շահերի: Զի՞ որ մենք ձեզ հետ միասին գիտենք, որ բանվորները ինտուիցիայով են հրապուրվում-ձգտում դեպի մարքսիզմ-լենինիզմը, որովհետեւ այդ ուսմունքը եղակիորեն ձիշտ ու ամենից ավելի լրիվ կերպով արտահայտում է պրոլետարիատի իդեալները՝ որպես դասակարգի:

Խմբակների մեջ մտնոլ առաջավոր բանվորների համար մարքսիզմ-լենինիզմին տիրապետելը կյանքի ու մահի հարց էր զարգացող դասակարգային պայքարում: Նրանք պայքարի էին ելնում հանուն բանվոր դասակարգի իդեալների, իսկ դրա համար նրանց հարկավոր էր հզոր զենք, ինչպես և էր մարքսիզմ-լենինիզմը: Սակայն, ճեռնամուխ լի-

նելով այդ գենքին, նրանք վտանգի էին ենթարկում ոչ մի-այն իրենց ազատության ողորմելի մնացորդները, այլ և իրենց գլուխները: Ստացվում էր, եթե կարելի է այսպես արտահայտվել, մեծ ու մոլի խաղ, ոսմանտեղմով լի ու խստ հուղիչ մի խաղ՝ ինչպես իր վտանգներով, այնպես և եր վեհ նպատակներով:

Ուստի և միանդամայն բնական է, որ երբ մարդիկ մտնում էին այդ պայքարի մեջ, ապա նրանք ուզում էին ինչպես հարկն է զինվել, նրանք ուզում էին իրենց համար խմատավորել և լուսաբանել այդ պայքարը, որպեսզի կուրորեն չդնային, նրանք ուզում էին ուրիշների համար էլ երևան հանել այդ պայքարի իմաստը, որպեսզի նրանց համոզեն և իրենց կողմը դրավեն: Մարքսիզմ-լենինիզմին տիրապետելը ունուցիոն մարտիկներին հնարավորություն էր տալիս համեմատաբար ավելի հեշտ դիմանալու կենցաղային ձախորդություններին և հսկայական չափով մեծացնում էր նրանց դիմադրականությունը իշխանությունների ունդրեսիաններին: Դուք հսկացա՞ք իմ միտքը: (Զայներ. «Այս», հսկացանք»):

Մի անդամ ևս կարդացել եմ հիանալի հատվածներ ֆելիքս Զերժինսկու օրագրից: Ոչ մի բան չի կարողացել ընկճել նրա երկաթե կամքը, նրա հավատը մեր գործի արդարացիության վերաբերմամբ: Շղթայակապ գրության մեջ՝ նա ըրել է. «Այստեղ, բանտում հաճախ լինում է ծանըր, ժամանակ-առ-ժամանակ նույնիսկ զարհութելի... Եվ, այնուամենայնիվ, եթե ինձ վիճակվեր կյանք սկսել նորից, ես կմկնել այնպես, ինչպես սկսել եմ: Եվ այդ ոչ ըստ պարագի, ոչ ըստ պարտականության: Դա ինձ համար օրդանական անհրաժեշտություն է»:

Ահա թե ինչ է նշանակում, ընկերներ, հաստատուն համոզունք մշակել իր մեջ, մարքսիզմ-լենինիզմով զինվել: Եվ այդ պատճառով միանդամայն բնական է, որ մեր խմբակայինները մարքսիզմ-լենինիզմի հմտունքներն այնպիսի աղահությամբ, այնպիսի կրքությամբ էին յուրացնում, ինչպես, օրինակ, ճանապարհորդը ջուր է խմում

այն աղբյուրից, որ նա դանում է բարեբեր օազիսում՝ Երկար ու հոգեմաշ ճանապարհորդությունից հետո:

Այդ մեծ պլյուսը, այդ հսկայական առավելությունները, որ մենք անցյալում ունեցել ենք, դուք այժմ չունեք, որը միանգամայն հասկանալի է: Զեղ մոտ՝ առաջի-տորիաներում—Երջանիկ Երիտասարդությունն է, առողջ, ազահոված, որը Երկյուղ չունի իր վաղվա օրիւա համար, որը ազատ է ու դաստիարակված սովետական պայմաններում: Զեր ուսանողները դասակարգային պայքարի դպրոց չեն անցել անմիջականորեն: Նրանք չեն տեսել ու իրենց կաշվի վրա չեն զգացել կապիտալիստական շահագործումը: Եթե կարելի է այսպես արտահայտվել, նրանք կապիտալիզմը մտահայեցողաբար են զգում:

Ճիշտ է, կապիտալիստական շրջազատումը նրանց հիշեցնում է և հիշել կտա իր մասին բավականաչափ ռեալ կերպով և անմիջականորեն: Բավական է մատնանշել թերուդ համաշխարհային կապիտալիզմի սպիտակ-ֆիննական ավանդարդի դեմ մզված կոփը: Եվ երբ մեր Երիտասարդությունն այդպիսի դեպքերում երես առ երես բաղխվում է կապիտալիզմի հետ, ապա նա զգում է այն ավելի կոնկրետ կերպով, նա սկսում է իր Երևակայության մեջ վերաբարտիրել այն ավելի ռեալ կերպով: Բայց իր սուօրյա կյանքում նա կապիտալիզմը չդիտե, որովհետև ներսում մենք վաղուց նրան վերջ ենք ավել: Ուստի շատ ուսանողներ մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրությանը մոտենում են հենց նույնպիսի տրամադրությամբ, ինչպես մյուս դիսցիպլինաների ուսումնասիրությանը:

Մեղնում այժմ մարքսիզմ-լենինիզմը պարտադիր առարկա է հանդիսանում բոլոր բարձրագույն դպրոցական հաստատություններում: Դա միանդամայն բնական է: Մեղնում արդեն ստեղծվել են մարքսիզմ-լենինիզմի հիմունքների դասավանդման բազմաթիվ կաղըեր, և ես համարացած եմ, որ ամենամոտ ազագայում լույս կտեսնի հետազոտական և գիտական-հանրամատչելի բնույթի հարուստ գրականություն բոլոր հասարակական գիտությունների վերաբե-

րյալ: Եվ ահա, որպեսզի ուսանող երիտասարդության ուշագրությունը մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրության վրա դրավենք, որպեսզի իրոք նրան հետաքրքրենք այդ առաջարկը, ունողություն թերիայով, դրա համար պահանջման է այժմ դասականդման բարձր որակ, այսինքն, զուք պետք է տիրապետեք պրոպագանդայի լենինյան-ստալինյան արվեստին: Խությունը դրանումն է:

Անձնապես ինձ թվում է, որ մարքսիզմ-լենինիզմի հիմունքների դասավանդումը ամենահետաքրքրական ու առավել շնորհակալ դասավանդումն է: Եթե վերցնենք նույնիսկ միջակ կալիբրի դասատու, որը փոքրիշատե տանելի է դասավանդում, որի մեջ կա գեթ միքիչ նկատելի՝ դասատական շնորհքի կայծ, ապա ես համարացած եմ, որ նրա առողջության միշտ լիքը կլինի ունկնդիրներով՝ առանց որևէ արտաքին հարկադրանքի: Բայց իս, չկա ավելի հետաքրքրական, ավելի գրավիչ առարկա, քան մարքսիզմ-լենինիզմի հիմունքները: Ո՞ր առարկան կարելի է ամենից ավելի վառ կերպով գեղազարդել լիզիթաներում և երիտասարդության հետ կատարվող սեմինարական պարապմունքներում: Ամբողջ կյանքը, բոլոր գիտությունները, արվեստները, գրականությունը, մարդկության ամբողջ անցյալը, ներկան ու մինչև իսկ ամազան—այդ ամենը ձեր տրամադրության տակ է որպես մարքսիզմ-լենինիզմի հիմունքների ամենապայծառ, հրապութիչ, ակնբախ ու համոզիչ լուսարանությունների ամենահարուստ արտենալ: Ոչ մի գիտություն այդ տեսակետից չի կարող համեմատվել մարքսիզմ-լենինիզմի հետ:

Սա, իհարկե, չի նշանակում, թե մյուս գիտությունները պետք է մի կողմ նետել կամ դեպի հետին պլանը մղել: Եթե դուք ինձ հենց այդպես հասկանաք, ապա այդ նշանակում է, որ ես չեմ կարողանում արտահայտել իմ մտքերը: Ոչ, ես այդ չեմ ասում: Ընդհակառակը, մարքսիզմ-լենինիզմը պահանջում է, որ մարդիկ բարեխղճորեն ուժումնասիրեն բոլոր գիտությունները: Մարքսիզմ-լենինիզմը կենսականորեն շահաղբուլած է, որ ամենալայն

կերպով տարածվեն գիտական գիտելիքները, որովհետեւ նա հենց ինքը գիտություն է և հենվում է բոլոր իրական գիտությունների տվյալների վրա:

Ես այն եմ միայն ասում, որ մարդսիզմ-լենինիզմի գասատուներն անհամեմատ ավելի նպաստավոր պայմաններում են գտնվում, որ նրանք անհամեմատ ավելի շատ հնարավորություններ ունեն իրենց ունկնդիրներին հետաքրքրելու և հրապուրելու համար, քան որևէ այլ առարկայի դասատուները: Վերցրե՛ք, օրինակ, մաթեմատիկան: Զէ՞ որ մաթեմատիկայի ամենաիդեալական, ամենաշնորհալի դասատուն էլ չի կարող այնպես ծաղկացնել, աշխուժացնել և պայծառ կերպով մատուցել երիտասարդությանը իր գիտությունը, ինչպես մարդսիզմ-լենինիզմի դասատուն կարող է անել այդ, եթե միայն նա գիտե իր առարկան, սիրում է այն և ինքն էլ համոզված մարդսիատլենինյան է: Իհարկե, շնորհալի մաթեմատիկոսը կարող է իր առարկան ունկնդիրներին մատուցել ավելի լավ, քան մաթեմատիկայի սովորական դասատուն, նրա ազգեցությունն ավելի ուժեղ և ավելի խորը կլինի, բայց այնուամենայնիվ ոչ բոլոր մարդկանց վրա, այլ միայն այն մարդկանց վրա, որոնք մաթեմատիկական բարձր ընթանողական ընդունակություն ունեն: Դե ցույց տվեք ինձ՝ ո՞ր առարկան կարող է ավելի հրապուրել: Ես կարծում եմ, որ այդպիսի առարկա չկա:

Ճիշտ է, մաթեմատիկան—դա չափազանց վերացական առարկա է: Լավ, վերցրեք այն ժամանակ պատմությունը—դա կոնկրետ գիտություն է, գունեղ, բովանդակությամբ հարուստ: Բայց և այնպես այդ առարկան նույնպես չի կարող, ըստիս, ավելի շատ հրապուրել, քան մարդսիզմ-լենինիզմը, նախ և առաջ այն պատճառով, որ նա այնուամենայնիվ սահմանարկալ գիտություն է: Բացի դրանից՝ պատմությունն ինքը մարդսիզմ-լենինիզմի փիլիսոփայական իդեաները մեկեն չեն յուրացվում: Հո չի կարելի մեկեն ոչնչից ամեն բան անել: Անշուշտ, մարդսիզմ-լենինիզմի փիլիսոփայական իդեաների յուրացման համար ժամանակ է պահանջվում:

այսինքն մարդսիզմ-լենինիզմի փիլիսոփայության ողով է զարգանում: Հակառակ դեպքում այդ կլինի վաստերի և իրադարձությունների սոսկական կուտակում, որն իսկական դիտություն չի տա:

Եվ ահա, ընկերնե՛ր, կարծում եմ, որ թեպետ և ձեր ուսանողները չունեն այն ստիմուլը, որ մենք ունենք ընդհատակում, բայց և այնպես ըստ էության դուք ունեք անշափելիորեն ավելի մեծ հնարավորություններ՝ ձեր առողջատորիան հրապուրելու, հետաքրքրելու համար: Մարդսիզմ-լենինիզմը, որպես դասավանդման առարկա, որպես հասուել մի դիսցիպլինա մեր բուհերում, ունի բոլոր տարրերը, որոնք առհասարակ պետք է հրապուրեն և կարող են հետաքրքրել մարդու, մանաւլանդ երիտասարդ մարդուն:

Ահա այստեղ հանդես եկամ մի ընկեր և ասաց, որ մարդսիզմ-լենինիզմի փիլիսոփայությունը շատ գելարառարկա է: Այդ պատճառով էլ, իբր, սխալվում են նրանք, ովքեր կարծում են, թե բուհ մտած 18 տարեկան երիտասարդը կամ աղջիկը կարող է հետությամբ մարսել մարդսիզմ-լենինիզմի փիլիսոփայական իդեաները: Սակայն հենց նույն ընկերն ինքը մատնանշեց, որ մարդսիզմ-լենինիզմի փիլիսոփայական իդեաներն ինչ-որ անհաղթահարելի ու անմատչելի մի բան չեն մեր բուհականների լայն մասսաների համար, և որ հետզհետե այդ իդեաները կարող են նրանց կողմից յուրացվել բավականաշահ խորը կերպով ու լրիվությամբ: Ինձ թվում է՝ նա իրավացի է: Իբրոք, մարդսիզմ-լենինիզմի փիլիսոփայական իդեաները մեկեն չեն յուրացվում: Հո չի կարելի մեկեն ոչնչից ամեն բան անել: Անշուշտ, մարդսիզմ-լենինիզմի փիլիսոփայական իդեաների յուրացման համար ժամանակ է պահանջվում:

Ես կարծում եմ, որ ձեր առողջատորիան, սովորական երիտասարդության առողջատորիան, չի կարող մարդսիզմ-լենինիզմի հիմունքներն ըմբռնելու անընդունակ լինել: Զէ՞ որ մարդսիզմ-լենինիզմը պատմության սինթեզն է, ընդհանրացումը, մարդկության ամբողջ գործունեության իմաստավորումը, դա աշխարհը փոխակերպող մի գիտություն

է: Համար ի՞նչպես կարելի է մտածել, որ ձեր առողջության, այսինքն կենսուրախ և ամենաաղնի: մտադրություններով լի սովորական երիտասարդների առողջության, անընդունակ է մարքսիզմ-լենինիզմի հիմունքներն ըմբռնելու: Աւզդակի խելքի մոտ բան չի, որ տասնամյակն աշխարտած և բուհ եկած 18 տարեկան երիտասարդը կամ 18 տարեկան աղջիկն ընդունակ չլինի ըմբռնելու ջերմ (ո՛չ արտաքին արտահայտչության իմաստով), խեկան մարդկային խոսքը մարքսիզմ-լենինիզմի մասին: Այդ չի կարող լինել: Նշանակում է, այդտեղ ամբողջ գործը դասավանդման մեջ է և միմիայն դասավանդման մեջ:

Սակայն դուցե՞ ձեղ համար, որպես մարքսիզմ-լենինիզմի դասատուների, գժվար է ծավարիել և լիովին իրացնել այն հսկայական առավելությունները, որ դուք ունեք մյուս դիսցիլինաների դասատուների համեմատությամբ: Գուցե՞ դուք սահմանափակված եք այն որոշակի շրջանակներով, որ տրված են «Համկ(թ)Պ պատմության համառոտդասընթացի» մեջ:

Եթե խոսքը մարքսիզմ-լենինիզմի արմատական, ոկրությունքային հիմունքների մասին է, նրա բուն իսկ ուսուլուցիոն էության մասին է, ապա ես ձեղ պետք է ասեմ, որ՝ ով գլուխ թռչի հենց այդ շրջանակներից, նա հեռու կդնա մարքսիզմ-լենինիզմից: Սակայն ես կարծում եմ, որ մարքսիզմ-լենինիզմի մեր այժմյան դասատուների մեջ չկան այնպիսի մարդիկ, որոնք նեղություն զգային այդ շրջանակներից: Դրա փոխարեն, գժրախտաբար, մարքսիզմ-լենինիզմի մեր այժմյան դասատուների մեջ տակավին փոքրաթիվ չեն այնպիսի մարդիկ, որոնք գոկտրինյորական, գողմատիկ կերպով են մոտենում իրենց առարկայի դասավանդմանը:

Ախր եթե ճիշտ հասկանանք մարքսիզմ-լենինիզմը, եթե ճիշտ հասկանանք «Համկ(թ)Պ պատմության համառոտդասընթացը», որպես մարքսիզմ-լենինիզմի հանրադիտարան,— առաջ կարո՞ղ են արդյոք նրա շրջանակները սահմանափակել մարդկային գործունեության և մտածողության ոլորտը:

Ոչ, չեն կարող, որովհետեւ «Համկ(թ)Պ պատմության համառոտդասընթացը» ընդգրկում է կոսմոսը:

Այստեղ հանդես եկալ Հանքային ինստիտուտի մարքսիզմ-լենինիզմի ամբիոնի ներկայացուցիչը: Այ, եթե ես այդ ինստիտուտում մարքսիզմ-լենինիզմի դասատու լինելի ժամանակակից պայմաններում և ընկեր կաֆտանովի վերահսկողության ներքո (ծիծաղ, ծափահարություններ), առաջ ես, ընկերնե՛ր, իմ պարտականությունը կհամարել մարքսիզմ-լենինիզմի շահերից ելնելով անպայման ուսումնասիրել հանքային գործը: (Ծախահարություններ: Զայնիք. «Ճիշտ է»):

Ես չեմ ասում, իհարկե, այնքան ուսումնասիրեմ, որ մասնագետ-հանքագործ դառնամ (դուք հասկացա՞՞ք ինձ), այլ այնքան, որ հնարավորություն ունենամ հանքային գործի ալյանսերից ու նյութերից լայնորեն օգտվելու մարքսիզմ-լենինիզմի դասավանդման ընթացքում: Այլ խոսքով ասած, մարքսիզմ-լենինիզմի դասավանդելիս ես լուսաբանված նյութ կօգտեի նաև հանքային գործի բնագավառից, որովհետեւ այդ նյութն առաջել մատչելի կլիներ իմ ունենդիրներին, իսկ մյուս կողմից՝ նա ակնբախ կերպով ցույց կտար, թե գործնականում ինչպես պետք է կիրառել մարքսիզմ-լենինիզմը հատկապես այդ բնագավառում:

Այստեղից, ընկերնե՛ր, ես հետեղնում եմ ընդհանուր կանոն, յուրաքանչյուր բուհում պետք է կազմակերպել մարքսիզմ-լենինիզմի դասավանդումը, հաշվի առնելով նրա պրոֆիլի առանձնահատկությունները, այսինքն լուսաբանելով համապատասխան մասնագիտական գիտությունների կոնկրետ նյութով: Այն ժամանակ մենք իրոք կպատրաստենք մարքսիզմ-լենինիզմով զինված մասնագետներ:

Մարքսիզմ-լենինիզմի դասատուները, օրինակ, Հանքային ինստիտուտում, պետք է հիշեն, որ մենք այդտեղ, այդ ինստիտուտում, պատրաստում ենք ոչ թե մարքսիզմ-լենինիզմի մասնագետներ, այլ մարքսիզմ-լենինիզմով դիմում՝ հանքային գործի մասնագետներ: Մարքսիզմ-լենինիզմի մասնագետներ պատրաստելու համար գոյություն ունեն

այլ ուսումնական հաստատություններ։ Հանքային ինստիտուտի, ինչպես և մյուս մասնագիտական բուհերի մարքսիզմ-լենինիզմի դասատունները, իրենց գործունեության մեջ պետք է ենին տվյալ բարձրագույն ուսումնական հաստատության գլխավոր դերից։

Որոշ ընկերներ կարող են ասել. իմ ինչ գործն են բուհում դասավանդվող մյուս դիսցիպլինաները—ես չահագըրդությած եմ միայն նրանում, որ ուսանողները լավ յուրացնեն մարքսիզմ-լենինիզմի հիմունքները։ Դա բացարձակապես սխալ հայացք է։ Դա հակասում է մարզսիզմ-լենինիզմի բուն խնդիրներուն։ Ինձ համար գեռես հասկանալի կլինիկներն մասնագիտական դիսցիպլինաների դասատունների համանումն դատողությունները։ Բայց երբ մարքսիզմ-լենինիզմի դասատուն է այդպես խոսում, ապա այդ արդեն ամենենին բանի պետք չի։ Ինչո՞ւ համար։

Նախ և առաջ այն սպատճառով, որ մարքսիզմ-լենինիզմի դասատունները—դրանք բոլցելիներ են։ Իսկ բոլցելիները չեն կարող միակողմանիորեն մոտենալ գործերին, չեն կարող նեղ-ցեխային տեսակետից դիտել հարցերը։ Եթե դու բոլցելիկ ես, ապա ուրեմն դու պետք է հոգ տանես ամբողջ գործի հաջողության մասին։

Մյուս կողմից, մարքսիզմ-լենինիզմի դասատունները—դրանք սովորական ուսանողության քաղաքական դաստիարակներն են։ Եվ, որպես այդպիսիները, նրանք պետք է հետաքրքրվեն մյուս դիսցիպլինաների դժով ուսանողների առաջադիմությամբ, նրանք պետք է ուսանողների վրա ներգործեն այն իմաստով, որ նրանց առաջադիմությունը ավելի ես բավարար բոլոր առարկաներից։

Ինչպես տեսնում եք, մարքսիզմ-լենինիզմի դասատունների խնդիրներն ըստ էության շատ ավելի լայն են, քան մյուս դիսցիպլինաների դասատունների խնդիրները։ Մըակակցությամբ ես կուզեի ընդգծել մարքսիզմ-լենինիզմի դասավանդման հետեյալ, իմ կարծիքով, գլխավոր խնդիրը։

Երեակայեցեք մարքսիզմ-լենինիզմի երկու դասատու-

ներ։ մեկի մոտ ունկնդիրների 20 տոկոսը վատ թվանշան ունի, դրա փոխարեն մյուսները դարձել են մարքսիզմ-լենինիզմի ջերմ պաշտպաններ, դարձել են համոզված կոմունիստներ։ մյուսի մոտ—ունկնդիրների միայն 10 տոկոսն ունի վատ թվանշան, բայց դրա փոխարեն նաև չի դաստիարակել մարքսիզմ-լենինիզմի և ո՛չ մի պրոզելիտ։ Հապա ձեր կարծիքով—այդ երկու դասատուններից ո՞րն է ավելի համապատասխանում իր կոչմանը։ Ես գտնում եմ, որ նրանցից առաջինն ավելի լավ է համապատասխանում իր կոչմանը, քան երկրորդը։

Այստեղից, ընկերներ, ձեր խնդիրն է՝ չբավարարվել առաջադիմության ձեռական ցուցանիշներով, այլ ուսանողներից դաստիարակել համոզված կոմունիստներ, մարքսիզմ-լենինիզմի բոցաշունչ պրոզելիտներ, իդեալական բոլցելիկներ, հետեւապես—իդեալական մարդիկ։ Մեր պատկերացումով, իդեալական բոլցելիկը—դա հենց իդեալական մարդն է, որովհետև նրա մեջ կենտրոնանում են մարդկանց ամենաիդեալական հատկությունները։

Եթե ես մարքսիզմ-լենինիզմի դասատու լինեի, ապա ես միշտ իմ ուշադրությունը կդարձնեի հատկապես այն բանի վրա, թե ըստ էության ինչպես են իմ ունկնդիրները յուրացնում մարքսիզմ-լենինիզմի հիմունքները։ Զէ՞ որ մարքսիզմ-լենինիզմը կարելի է յուրացնել լոկ ձեռականութեն, կարելի է լավ անդիր անել բոլոր Փորմուլաները, պատմական գեպերն ու թվականները, բայց ընդումին համոզված մարքսիստ-լենինյան զըառնալ։ Ի՞նչ եք կարծում դուք—Հնարապելո՞ր ե այդ, թե ոչ։ (Չայներ տեղերից Հնարապելո՞ր է)։

Մյուս կողմից, կարելի է Փորմուլաներ չխմանալ էլ, բայց ըստ էության տիրապետել մարքսիզմ-լենինիզմի ոգուն։

Եվ ահա իմ առջեն են երկու այդպիսի ուսանողներ։ Նրանցից մեկը բոլորը պատասխանում է անդիր, բայց երեսում է, որ նա մարքսիստ չէ, լենինյան չէ, իսկ մյուսը արտաքինի կարծես թե այնքան էլ պարզորոշ չի պա-

տասխանում, բայց երբ մոտենում է որևէ մի հարցի, ապա քննում է այն սկզբունքայնորեն, մարքսիզմ-լենինիզմի ոգով, որպես համոզված բոլշևիկ: Ես կարծում եմ, որ երկրորդ ուսանողին պետք է ավելի բարձր գնահատուական նշանակել, քան առաջինին, որովհետեւ մեզ հարկավոր են ոչ թե տիրացուներ, այլ մարքսիստ-լենինյաններ: Ճիշտ է այս, թե ոչ: (Զայներ տեղերից. «Ճիշտ է»):

Բայց որպեսզի մեր ուսանողներից մարքսիզմ-լենինիզմի պրոցելիաներ, համոզված բոլշևիներ պատրաստենք, դրա համար հարկավոր է մարքսիզմ-լենինիզմի բուն խոր դասավանդման մեջ դնել մեծ չափով մարդկային ավյուն, կրակ: Եթե մարքսիզմ-լենինիզմի դասատուն վառվում է իր աշխատանքում, եթե նրա ամեն մի լեկցիան բոլշևիկի այրումըն է, ապա ուրեմն կարելի է վատահ լինել, որ նա կըստեղծի մարքսիզմ-լենինիզմի բազմաթիվ պրաղելիուններ:

Ընկերներ, դուք պետք է լինեք ոչ թե սոսկ դասատուներ, այլ և քաղաքագետներ: Զեղ մոտ է գալիս երիտասարդությունը: Նա խիստ դյուրընկալ է: Նայեցի՛ք անցյալը, ծանոթացեք զանազան գիտությունների խոշոր պրոֆեսորների կենսագրությանը—և դուք կտեսնեք, թե ինչպես մեծ է եղել նրանց ազդեցությունը ուսանողության վրա: Ականավոր պրոֆեսորները միշտ խորը հետք են թողել իրենց աշակերտների սրաերում: Զեղ վրա ընկած է բարոյական ամենամեծ սպատասիանատվություն սովորական ինտելիգենցիայի ապագա կադրերի քաղաքական ձևավորման իմաստով: Դուք պետք է տաք ձեր ունինդիրներին քաղաքական ուղղություն ամբողջ կյանքի համար: Ահա թե որն է ձեր տեղը՝ բուհերի ամբողջ պրոֆեսորական-դասատուական կոլեկտիվի մեջ:

Ես հասկանում եմ, ընկերներ, որ այդ բոլոր խնդիրները հաղթահարելը հեշտ չէ: Դրա համար ձեզնից յուրաքանչյուրը, բացի մարքսիզմ-լենինիզմ իմանալուց, պետք է խիստ շատ տվյալներ ունենա:

Մասնավորապես, մարքսիզմ-լենինիզմի դասատուները պետք է լինեն ամենակուլտուրական մարդիկը, կամ գոնե,

առավել կուլտուրական մարդկանցից մեկն իրենց ինստիտուտում: Դրա հետ միասին դուք պետք է լինեք շատ դիտակ մարդիկ: Իհարկե, կուլտուրականությունը և կրթվածությունը—դրանք միևնույն բանը չեն, այդ հասկացողությունները չեն զուգադիպում: Ի՞նչպես է ձեր կարծիքով—զուգադիպում են, թե չեն զուգադիպում: (Զայներ տեղինից. «Իհարկե չեն զուգադիպում»):

Նշանակում է, այդ բանում մենք ձեզ հետ համաձայնության եկանք, դուք պետք է լինեք և՛ ամենից ավելի կրթված և՛ ամենից ավելի կուլտուրական մարդիկը ձեր բուհերում:

Կրթությունը Հեշտությամբ չի ձևոք բերվում: Այդ պետք է նվաճել անխոնջ աշխատանքում: Առանց լայն կըրթվածության չի կարելի մարքսիզմ-լենինիզմ դատավանդել՝ հույս ունենալով թեկուղ փոքրիկ հաջողության: Մարքսիզմ-լենինիզմի ի՞նչ զանատու կարող է ստացվել մի մարդուց, որը վատ է իմանում ՍՍՌՄ ժողովուրդների պատմությունը, ընդհանուր պատմությունը, բնագիտությունը, գրականությունը, փիլիսոփայությունը, արվեստի զանազան ճյուղերը և այլն:

Դուք, հավանողեն, լավ ծանոթ եք Կարլ Մարքսի այն տետրակներին, որոնք պարունակում են նրա հռչակավոր խրոնոլոգիական քաղվածքները: Սակայն Կարլ Մարքսը ապշեցնում է ո՛չ միայն պատմության վերաբերյալ, այլ և՛ մաթեմատիկայի, և՛ բնական գիտությունների, և՛ գրականության, և՛ արվեստների վերաբերյալ ունեցած իր գիտելիքներով և այլն և այլն: Ի՞նչ ասես որ չգիտեր Մարքսը: Ահա՛ թե ինչն է հաջողությունը: (Ծափակարություններ):

Լայն կրթվածությունը ձեզ հնարավորություն կտա հեշտությամբ ու հապուրիչ կերպով կազմելու ձեր լեկցիաները: Դուք նկատեցի՛ք, որ «Համեր(ր)Պ պատմության համառոտ գասընթացում» Ժամանակակից խորը կերպով են ձեակերպված առաջավոր ունուցիոն թեորիայի հիմնական եզրակացություններն ու դրույթները: Եվ եթե դուք ուզում եք, որ այդ եզրակացություններն ու դրույթ-

ներն օրդանապես յուրացնի 18 տարեկան պատանին, ապա դրա համար անհրաժեշտ է, որ դուք ինքներդ ունենաք լայն կրթվածություն: Օդտվելով ձեր կրթվածությունից, դուք կկարողանաք մարքսիզմ-լենինիզմի դասավանդման ընթացքում պատմական գուրգահեռներ գտնել, գեղարվեստական պատկերներ մեջբերել, ցայտուն իլյուստրացիաներով պարզաբանել առանձին եղբակացությունները և դրույթները:

Ընդսմին չի խանգարում ձեզ՝ հիշել ընկեր Ստալինի ցուցումն այն մասին, որ պարտիական կադրերը պետք է լըջորեն ուսումնասիրեն միջազգային քաղաքականությունը: Բացի մյուս բաներից նաև, միջազգային քաղաքականությունը, ամենահարուստ նյութն է տալիս դասակարգային պայքարը հասկանալու համար:

Այդ ամենն զգալիորեն կհեշտացնի մարքսիզմ-լենինիզմի յուրացումը:

Եվ այդպես, ընկերներ, ձեզ վրա հսկայական պատասխանատվություն է ընկնում: Այստեղ համարվել են ամբողջ Սովետական Միությունից՝ բարձրագույն դպրոցի մարքսիզմ-լենինիզմի դասասուները: Հապա էլ ո՞րտեղ մշակել մարքսիզմ-լենինիզմի դասավանդման հարցերը, եթե ո՞չ մեր երկրում, եթե ո՞չ այստեղ—այս կոմպետենտ ժողովում:

Եվ ահա, ես կուզեի, որ դուք հաջող կերպով լուծեք այդ հարցերը և ամենամոտիկ ժամանակում պատշաճ բարձրության վրա դնեք մարքսիզմ-լենինիզմի հիմունքների դասավանդումը, որ մեր բուհերում մարքսիստական-լենինյան միտքն աղբյուրի պես բղխի, որ մեր բուհերը բաց թողնեն մարքսիզմ-լենինիզմով սպառազինված ամեն տեսակի մասնագետներ սոցիալիստական շինարարության զանազան ճյուղերի համար: Դրան էլ հենց ձգտում է մեր պարտիան, դրան է ձգտում ընկեր Ստալինը: Ես կարծում եմ, որ ձեր կողմից դա ամենալավագույն օգնությունը կլինի մեր սոցիալիստական պետության ամբապնդման գործում, կոմու-

նիզմի կառուցման գործում: Տեսնում եք, ինչպես այսուեղ ամեն ինչ շաղկապված և մեկը մյուսի հետ:

Որպես եղբայրակումն, թույլ տվեք ցանկալ ձեղ լիակատար հաջողություն ինչպես այս խորհրդակցության աշխատանքում, այնպես և ձեր հետագա դասասունական գործունության մեջ: (Բուռն ծափահարություններ, բոլոր ոստի են կանգնում):

«Правда», 1940 թ. հունիսի 25:



740  
41

ՃԱՌ  
ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՄՈՒԹԻՉՆԵՐԻ —  
ԱԿԱԴԵՄԻԿՈՆԵՐԻ, ԻՆԺԵՆԵՐՆԵՐԻ, ԲԺՇԿ-  
ՆԵՐԻ, ԱՐՏԻՍՏՆԵՐԻ, ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԹԲԻԼԻՍԻԻ  
ՀԱՄԱՔԱՂԱՔԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ  
1940 թ. մայիսի 27-ին



Անկերներ, ես ողջունում եմ ձեզ, որպես մեծ Սովետական Միության ինտելիգենցիայի առաջավոր ջոկատներից մեկին: (Բուռն ծափահարություններ):

Հեռավոր անցյալում մենք, բոլշևիկներս, բալականաչափ կովել ենք ինտելիգենցիայի դեմ, որչափով որ նա բութուական աղղեցություն էր, մտցնում բանվորական մասսաների մեջ, ժողովրդի լայն մասսաների մեջ, մի կողմ քաշելով բանվոր դասակարգին ուղիղ ուղղուցիոն ճանապարհոց:

Բայց դրա հետ միասին ես պետք է ասեմ, որ ժողովուրդը, առանձնապես բանվոր դասակարգը, միշտ բարձր էր գնահատում ինտելիգենցիայի գիտելիքները, միշտ ամենախորին հարցանք էր տածում դեպի ինտելեկտուալ, մտավոր աշխատանքը, միշտ համարանք էր ու սիրո զգացմունքը էր վերաբերվում դեպի ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները, որոնք լուսավորություն էին մտցնում մասսաների մեջ, և որոնք լայնացնում էին մասսաների քաղաքական մտահորիզոնը, որոնք օգնում էին զարգացնելու սոցիալիստական գիտակցությունը:

Սոցիալիստական ինտելիգենցիան կազմում էր ընդհանուր ինտելիգենցիայի սոսկ մի փոքր մասը: Նա բաղկա-

ցած էր աղնիով մարդկանցից, որոնք իրենց կյանքի նպատակ էին դրել բանվոր դասակարգին ծառայելը, որոնք իրենց ամբողջ ուժերը տվել էին պլոտքեսիվ մարդկության լավագույն իդեալների իրականացման համար մզլող պայքարին: Նա հանդիսանում էր գիտական սոցիալիզմի իդեաների անցկացնողը Ռուսաստանի պրոլետարական մասսաների մեջ:

Առաջիւ ժամանակներում, էին ցարական Ռուսաստանում ճնշված ժողովուրդներից միայն քչերն ունեին իրենց ինտելիգենցիան: Վեհապետական ռուս ազգի տիրապետող դասակարգերն անում էին ամեն ինչ, որպեսզի դժվարացնեն ու խանգարեն հպատակակցության արթնացումը, ձգտելով թույլ չտալ նրանց մոտ սեփական ինտելիգենցիայի գոյացումը: Բայց եթե որոշ ժողովուրդների, չնայած ցարիզմի ամենաստեսակ ճնշմանն ու հարստահարմանը, հաջողովում էր այնուամենայնիվ ստեղծել իր ինտելիգենցիան, ապա նա, որպես կանոն, եփվում էր իր սեփական ազգային հյութի մեջ: Իսկ էապես՝ ճնշված ազգերի ինտելիգենցիան իր սահմանափակ միջոցներով կատարում էր ընդհանուր առմամբ նույն այն սոցիալական դերը, ինչ որ վեհապետական ազգի ինտելիգենցիան: Եվ որչափով որ առաջվա, չին ինտելիգենցիայի յուրաքանչյուր ազգային ջոկատ ծառայում էր իր ազգային բութուալիստային, ապա համառուսաստանյան ինտելիգենցիայի տարեր ազգային ջոկատների միջև մշտապես մզլում էր ազգային դաժան պայքար: Հետևաբար, առաջիւ ժամանակներում ինտելիգենցիան մեր երկրում անջատված էր ու մասնաւուած: Նրա առանձին ազգային ջակատների միջև իշխում էր թշնամության ու փոխադարձ անվատահության ողին, որը նա փոխադրում էր իր ժողովրդի մասսաների մեջ, ինչպես այդ պահանջում էին ազգային բութուալիստային, հատկապես ուռսական բութուազիայի շահախնդրությունները:

Այլ է բանն այժմ, պրոլետարիատի դիկտատուրայի և սոցիալիզմի էպոխայում, երբ մեզնում միանդամ ընդ-

միշտ վերջ է տրված ամեն տեսակի ստրկության ու ճընշման, երբ մեզնում հաստատված է ժողովուրդների անկեղծ, անշահասեր ու անխախտելի բարեկամություն, երբ մենք ստեղծել ենք բոլոր ազգությունների բանվորների ու գյուղացիների միջից ելած մեր սեփական ինտելիգենցիան, այսինքն սոցիալիստական ինտելիգենցիան, որը նվիրված է իր մեծ բազմազդ սովորական ժողովրդին և Լենինի—Ստալինի մեծ պարտիային։ Եվ ահա այժմ, ինչպես ճիշտ կերպով նշեց ընկեր Ժանետին, մեր ինտելիգենցիայի առաջ, ինտելիգենտուալ աշխատանքի մարդկանց առաջ մեր երկրում բացվել է ստեղծագործության համար այնպիսի լայն առարկեզ, որի մասին առաջ մինչեւ իսկ երազել չէր կարելի։

Առաջ, օրինակ, վրացական գրողը գրում էր վրացերեն լեզվով միայն վրաց ժողովրդի համար։ Նույնիսկ խիստ չնորհալի գրողին լայն ասպարեզ դուրս գալը, չասենք ելրոպական, այլ հենց ուստական գրականության մեջ, մեծ դժվարություններ էր ներկայացնում, ընդհուպ մինչեւ ոստիկանական արգելքները։ Բայց փաստորեն այն ժամանակ նա չէր ստեղծագործում նույնիսկ իր ժողովրդի համար։ Իսկ այժմ նա իսկապես ստեղծագործում է վրաց ժողովրդի համար, իսկ դրա հետ միասին նաև ամբողջ 183-միլիոնանոց սովորական ժողովրդի համար։ Դրանում էլ հենց արտահայտվում է սովորական իշխանության կարևորագույն առանձնահատկություններից մեջը, որը խորապես ինտերնացիոնալ է բուն իր բնույթով։ Կարելի է համարձակ ասել, որ մեր ժամանակում վրացական, հայկական, բելուստական, ուկրաինական և ուզածդ ազգային գրողի և ոչ մի արժեքավոր գեղարվեստական ստեղծագործություն գուր տեղը չի մնա, նա խկույն ևեթ դուրս կթռչի համամիութենական ասպարեզ, նրան կարձագանդի ոչ միայն ուսւածովուրդը, այլև ամբողջ Սովորական Միության ժողովուրդը։ Ահա թե ինչումն է կայանում նոր դրությունը։

Այդ նոր դրությունն, անկասկած, լայնացնում է ինտելիգենտուալ աշխատանքի բնագավառի բոլոր աշխատող-

ների մտահորիզոնը և նվազեցնում է ազգային սահմանափակվածությունը։ Զէ՞ որ այժմ նրանք բոլորն էլ ամբողջ թափով ձգտում են համամիութենական ասպարեզ։ Դուք կարող եք շրջել ամբողջ Սովետական Միությունը, հարցում անել բոլոր մարդկանց—և չեք գտնի մեկին, որը չցանկանա Հիմնվել Մուկլայում։ Եթե գիտության կամ արվեստի բնագավառուի այս կամ այն աշխատողը չափազանց աչքի է ընկնում, ապա նրան սովորաբար գրավում է Մուկլան, ինչպես և այդ հարկ է։ Եվ կարելի է համարձակ ասել, որ յուրաքանչյուր այդպիսի աշխատողի համար Մուկլա փոխադրվելը հանդիսանում է սովորաբար ուրախ գիտմած, քանի որ յուրաքանչյուր ոք հասկանում է, որ Մուկլան—դա իր մեծ հայրենիքի ուղեղն ու սիրոն է, դա անմահության քաղաքն է, դա հսկայական առաջարեղն է ստեղծագործական գործունեության համար։ Բայց Մուկլա փոխադրվելով, գիտության կամ արվեստի բնագավառուի գործիչը չի կորցնում կապն իր ժողովրդի հետ, և այդ պատճառով էլ նա այնպես հետությամբ թողնում է հայրենի երկիրը։ Եթե ցարիզմի օրով ցարիզմին ծառայության անցնելու համար Պետերբուրգ փոխադրվելը նշանակում էր կապը կորցնել իր ժողովրդի հետ և հաղորդակից լինել ազգային կեղեցիչների հետ—ուսւածականությանը, ապա մեր ժամանակում, ընդհակառակը, գիտության և արվեստի այս կամ այն աշխատողի Մուկլա գնալը ոչ միայն չի թուլացնում, այլ էլ ավելի ուժեղացնում է նրա կապն իր ժողովրդի հետ։ Արտահայտվելով բարձր ոճով, կարելի է ասել, որ ժողովուրդը կարծես ուղարկում է իր լավագույն զավակներին ինտելիգենտուալ ստեղծագործության համամիութենական արենապագը, որպեսզի այնտեղ փայլի վրաստանի փառքը ՍՍՌՄ բոլոր ժողովուրդների լավագույն ներկայացուցիչների համերաշխ անսամբլում։ Այդ դրությունը ընդարձակում է մեր ինտելիգենցիայի մտահորիզոնը, ընդլայնում է նրա բոլոր զագացմունքների ու հայցքների ազգային շրջանակները։ Ներկա մոմենտում մեր բոլոր գիտնականները, գրողները, նկարիչները ստեղծա-

գործում են ոչ թե միայն իրենց համար, ոչ թե միայն իրենց ժողովրդի համար, այլև ամբողջ սովետական ժողովրդի համար: Այդ ես համարում եմ սոցիալիստական ռեվոլուցիայի ամենալուրջ նվաճումներից մեկը ինտելեկտուալ աշխատանքի բնագավառում:

Վրաց ինտելիգենցիան հանդիսանում է մեր սովետական ինտելիգենցիայի բաղկացուցիչ մասը: Մենք կառուցում ենք սովետական պետություն, կառուցում ենք կոմունիզմ ինտելիգենցիայի հետ միասին, նրա ակտիվ մասնակցությամբ: Հարկավ, մենք նշանակելիորեն առաջ ենք անցել այն բանի համեմատությամբ, ինչը որ կար երեկ կամ երեկ չէ մյուս օրը: Բայց մեր առաջ կանգնած են դեռ շատ խընդիրներ—և այն էլ ինչպիսի՞ խնդիրներ:

Ահա, օրինակ, մուսթավելու պողոտայի վրա կառուցված են սքանչելի, բարձր ճարտարապետական որակի շենքեր, առավելապես հասարակական օգտագործման համար: Հարկավոր է այդ փորձը և ստեղծագործական եռանդը գործադրել նաև բնակարանային շինարարության համար:

Դուք հասկանում եք, որ ես նկատի ունեմ ո՛չ թե հասարակական շենքերին ընդհանրապես հատուկ մեծամիթխարության ընդունակումը, այլ այն, որ բնակելի տներն իրենց հերթին լինեն ճարտարապետության վերջին խոսքի գեղարվեստական մարմնացումը, որպեսզի դրանք չփչացնեն բնակիչների տրամադրությունը՝ աշխատանքից վերադառնալիս, որպեսզի դրանք չնեղաթյուրեն, չքիթացնեն նրանց գեղարվեստական ճաշակը, այլ, ընդհակառակը, որպեսզի դրանք է՛լ ավելի բարձրացնեն նրանց տրամադրությունը, որպեսզի դրանք զարգացնեն ու կատարելագործեն նրանց գեղարվեստական ճաշակը, որպեսզի միաժամանակ դրանք համապատասխանեն բնակիչների բոլոր գործնական պահանջմունքներին:

Մենք ասում ենք, որ պայքարում ենք կոմունիզմի համար, կառուցում ենք կոմունիզմը:

Բայց ահա, ընկերներ, կամունիզմ կառուցել այժմ—այդ նշանակում է ստեղծել հարմարություններ, արմա-

ռացիոնել կուլտուրան, գեղեցկություն մտցնել յուրաքանչուր սովետական քաղաքացու ամբողջ կենցաղում: Այդ կողմէից արդյոք մենք շա՞տ բան ենք արել: Կարելի է ասել, որ աշխատանքն այդ իմաստով նշվում է միայն ընդհանուր գծերով: Եվ ահա վրացական ինտելիգենցիան, իմ տեսակետից, նույնպես պետք է ձեռք գարկի այդ աշխատանքին: Արտաքուստ այդ աշխատանքն այնպես փայլուն ու այնպես էֆեկտավոր չէ, ինչպես, ասենք, արտիստների ելույթը բամի վրա, բայց նա բացառիկ նշանակություն ունի բնակչության ընդհանուր կուլտուրականության բարձրացման համար:

Ինտելիգենցիայի երկրորդ խնդիրը—դա գրադիտության բարձրացումն է: Ես նկատի ունեմ ոչ թե տարրական գրագիտությունն, այլ այն, որ մարդ կարողանա գրագետ կերպով շարադրել իր մտքերը: Փաստ է, որ սովետական կառավարությունը բացառիկ ուշադրություն է դարձնում գրագիտության բարձրացմանը մեր երկրում, որովհետև գրագիտությունը մարդկանց կուլտուրայի տարրական հիմքն է: Ինձ թվում է, վորտեղ էլ թեկուզ, համենայն դեպք այս բնագավառում ինտելիգենցիան պետք է նախամարտիկ լինի: Այն մարդիկ, որոնք իրենք տիրապետելով հարուստ գիտելիքների, գրագիտության պակաս են տեսնում իրենց համագործակցիների մոտ, այդ մարդիկ պետք է ահազանգ խիեն, բառացիորեն՝ ահազանդ, նրանք պետք է ամբողջ եռանդով համընդհանուր գրագիտություն տարածեն, որպեսզի Սովետական Միությունը դարձնեն աշխարհում ամենակուլտուրական երկիրը:

Այդ մեր ամբողջ ինտելիգենցիայի խորը հայրենասիրական պարտականությունն է:

Ինտելիգենցիայի երրորդ խնդիրը—դա մեր երկրի արաշտապանությունն ամեն կերպ ամրապնդելն է: Թվում է, թե այդ ամենից քիչ է վերաբերում ինտելիգենցիային, քանի որ մենք ունենք զինվորական մարդկիկ, որոնք և դրանով զրադշում են «չտառապով»: Բայց դուք ինքներդ էլ տեսնում եք, թե ինչպիսի ձևեր ու մասշտաբներ է ընդունել

ժամանակակից պատերազմը։ Այդ ձևերն ու մասշտաբները բոլոր քաղաքացիներից պահանջում են շատ լուրջ նախնական նախապատրաստություն, աշակերտում և բարձր հմտություն՝ պատերազմ վարելու գործում։ Այդ պատճառով էլ ինտելիգենցիան, որպես բնակչության առավել գիտակից մասը, պետք է ամենից առաջ ինքն ամեն օր պատրաստվի և ուսումնասիրի ռազմական գործը։ Իսկ բացի դրանից նա պետք է մասսաների մեջ համարատափան աշխատանք ծավալի, լայնորեն տարածելով սլատերազմի նորագույն փորձը։ Եվ, վերջապես, մեր ինտելիգենցիան հանձին իր որոշ ջոկատների պետք է մաքսիմալ չափով ուժեղացնի աշխատանքը գյուտարարության ուղղությամբ, պաշտպանության ու հարձակման բոլոր հնարավոր միջոցների կատարելագործման ու ռայինալացման ուղղությամբ։

Մեր երկրի պաշտպանության ամրապնդումը—դա ամբողջ ժողովրդի, ամբողջ սովետական ինտելիգենցիայի գործն է։ Գլխավորը—արմատացնել, ամուր արմատացնել ժողովրդի գիտակցության մեջ, որ երկրի պաշտպանությունը, նրա ռազմական նախապատրաստությունը դեռևս խաղաղ ժամանակ ՍՍՌՄ քաղաքացու ամենալուրջ պարտականություններից մեկն է։ Սովետական ինտելիգենցիան պետք է նախամարտիկը, նախաձեռնողն ու ոգեշնչողը դառնաւ այդ հարցում։

Վրացական սովետական ինտելիգենցիան միութենական ինտելիգենցիայի օրգանական բաղկացուցիչ մասն է հանդիսանում։

Հոկտեմբերի հաղթանակի առաջին իսկ օրերից վրացական ինտելիգենցիայի վրա ընկան և ընդհանուրմիութենական պարտականություններ։ Քանի դեռ կար ցարիզմը, վրանցական ինտելիգենցիան կարող էր պատասխանատու չլինել ուսուականի փոխարեն։ Այժմ բոլորովին այլ դրություն է։ Այժմ ձեզ վրա ընկան են մի ամբողջ շարք ամենապարտխանակու և ընդհանուրմիութենական ինդիրներ։

Ընկերներ, երբ ես թվում եմ այն խնդիրները, որ կանգնած են ձեր առաջ, ապա ես դրանով չեմ ուզում ասել այլ բան, բացի նրանից, որ այդ խնդիրների հաջող լուծման համար մզվող պայքարում ավելի հաճախ հանդիպեր Վրաստանի փառապանծ անունը։ Ես դրանով չեմ ուզում նմանապես փոքրացնել այն հսկայական աշխատանքը, որ կատարել է վրացական ինտելիգենցիան սովետական իշխանության գոյության տարիներին։ Այդ աշխատանքի մասին կարելի է դատել թեկուզ և այն կառուցումներով, որոնք իրան այստեղ, Թբիլիսիում, ինչպես և Մոսկվայում ու Սովետական Միության մյուս խոշոր քաղաքներում։ Ես ուզում եմ ասել միայն մի բան, որ մեղ հարկավոր է էլ ավելին։ Մենք, բոլեկիներու, անհագուրդ ու անխոնջ մարդիկ ենք։ Որքան շատ ենք հասցնում անել, այնքան ամելի շատ ենք ձգտում անելու։ Մեզնում իրոք ախորժակն ատամի տակին է։ Եվ ես կարծում եմ, որ մեր այդ առանձնահատկությունը ոչ թե թուլացնում, այլ հրահրում, լայնացնում է բոլոր սովետական մարդկանց ստեղծագործական գործունեությունը։

Իսկ այժմ, ընկերներ, թույլ տվեք ամբողջ հոգով շնորհակալություն հայտնել ձեզ այն ջերմ զգացմունքների համար, որ դուք այնպես առատ ցուցադրեցիք ձեր հանդիպման ժամանակ ինձ հետ, որպես կենտրոնական իշխանության ներկայացուցչի և որպես մարդու։ Ես սիրում եմ Վրաստանը։ Ես սիրեցի նրան այն պահից, երբ ես առաջին անգամ եկա Վրաստան, այսինքն երբ դեռևս երիտասարդ էի։

Ճիշտ է, երիտասարդները, ինչպես դուք գիտեք, վարդագույն տրամադրություն են ունենում։ Բայց ահա անցել են տասնյակ տարիներ, իսկ իմ մեջ այդ վարդագույն տրամադրությունը մնացել է։ Դրա հետ միասին իմ մեջ ամենալավագույն հիշողություններ են մնացել Վրաստանի մասին։ Եվ ես պետք է խոստովանեմ, որ միշտ ունեցել եմ մի փափառ—հենց որ հնարավորությունը ներկայանալու վերադառնալ Վրաստան և այստեղ աշխատել։ Ինչպես տես-

նում եք, այդ ինձ չի հաջողվել։ (Ծափահարություններ)։

Մեկ անգամ չէ, որ ես խորհել եմ, թե ինչո՞ւ համար ես այդպես սիրում եմ Վրաստանը։ Եվ ինձ մոտ անփոփոխ կերպով ստացվել է մեկ պատասխան։ բանն այստեղ, իհարկե, երիտասարդության վարդադրություն տրամադրությունները չեն, այլ այն, որ ինձ շատ է դուռ եկել վրաց ժողովուրդը։ Դրանից հետո ես եղել եմ և այլ վայրերում, բայց ինձնում չեն մնացել այդպիսի զգացմունքներ ու հիշողություններ։ Իսկ չէ որ այն ժամանակ էլ նույնպես ես երիտասարդ էի։ Վրաց ժողովուրդը, Վրաստանի բանվորներն ինձ վրա թողել են համակրանքի այնպիսի դրոշմ, որ ահա այժմ, երբ արդեն անցել է 40 տարի, այդ դրոշմն ամուռ ապրում է իմ սրտում։ (Բուռն ծափահարություններ)։

Գատմելով իմ այդ էմոցիաների մասին, որոնք առաջցել են վրաց ժողովուրդի և Վրաստանի բանվորների հետ շփմբուց, ես չեմ կարող լրել և այն համակրանքների մասին, որ վաղուց տածում եմ դեպի վրացական ինտելիգենցիան։ Նա միշտ աչքի է ընկել ցարական ինքնակալության դեմ մղված, ժողովրդի գործի համար մղված պայքարում։ Կարելի է հաշվել տասնյակ և հարյուրավոր մարդիկ, որոնք իրենց կյանքն են տվել այդ պայքարում։ Ես արդեն չեմ խոսում այն մասին, որ վրաց ժողովուրդը տվել է մեծագույն համաշխարհային առաջնորդ—ընկեր Ստալին։ (Բուռն ծափահարություններ)։ Բոլորը ստիի են կանգնում։

Այս բոլորն, ընկերներ, պատահականություն չէ։ Վրաց ժողովուրդը կուլտուրայով հնագույն ժողովուրդներից մեկն է մեր երկրում։ Վրաց ժողովրդի կուլտուրան սաղմնավորվել է տակավին մինչքրիստոնեական էրայում։ Նա գարդացել է աշխարհի հնադույն ու նորագույն կուլտուրաների փոխազդեցությունը։ Թերևս, ոչ մի կուլտուրա մեր երկրում չունի այնպիսի երկար պատմություն, ինչպես վրացական կուլտուրան։ Անձամբ ինձ միշտ հափշտակել են վրացական հնության հուշարձանները, վրաց արվեստը, վրաց գրականությունը։ Եթե կարդում ես Ռուսթավիելին, ապա մտածում ես։ Քի՞չ կդանիլեն 700 տարի սրանից առաջ

ապրած գրողներ, ինչպես վրաց ժողովրդի այդ ազնիվ հանճարը։ Այս ամենը մեզ ասում է այն մասին, որ վրաց ժողովուրդը հնուց իվեր օժտված է հսկայական ինտելիգենցիալությունություններով։ Եվ այդ պատճառով նա կարողացել է ստեղծել այդպիսի ինտելիգենցիա։ Եվ այդ պատճառով նա մարդկությանը կարողացել է տալ մեծ Ստալին։ (Բուռն ծափահարություններ)։ Բոլորը ստիի են կանգնում։

Եվ ահա, ընկերներ, թույլ տվեք ինձ ցանկալ, որ վրացական ինտելիգենցիան ուժերի լիակատար լարումով տա այն ամենը, ինչ նա ունի, կոմունիզմի շինարարությանը՝ մեր կյանքի բոլոր ոլորտներում։ (Բուռն ծափահարություններ)։

Ընկերներ, ես կուղենայի մեկ անգամ էլ հանդիպել ձեզ հետ, և ես հույս ունեմ, որ այդպիսի երջանիկ հնարավորություն ես էլի կունենամ։ Մինչև այդ ժամանակը, ես հավատացած եմ, դուք նոր հաջողովություններ ձեռք բերած կլինեք կոմունիզմի համար մղվող պայքարում։ (Բուռն ծափահարություններ)։ Բոլորը ստիի են կանգնում։

«Заря Востока», 1940 № 40-ի 29:



ՃԱՌ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՊԻՌՆԵՐՆԵՐԻ ՄԵԶ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ԳԾՈՎ ՀԱՄԼԿԵՄ ՄԱՐԶԿՈՄՆԵՐԻ  
ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԼԿԵՄ  
ԿԵՆՏԿՈՄԻ ՌԻՆԵՑԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ  
1940 թ. մայիսի 8-ին



Ընկերներ, ես չէի ուզում ելույթ ունենալ, բայց ընկեր Միխայլովն ասում է, որ առանց դրան չի լինի: Խսկի՞նչ ասել ձեզ ներկա խորհրդակցության կապակցությամբ: Ինձ թվում է, որ ձեր գեկուցումներում պակասում են խիստ էական շատ տարրեր:

Դուք Համկեն մարզկոմների քարտուղարներ եք դրագ-րոցական երիտասարդության և պիտներների մեջ տարլող աշխատանքի գծով: Ես կուգեի հասկանալ, թե ի՞նչ է նշանակում այդ: Ես վախենում եմ ինձ հին մարդ կոչել, բայց այնուամենայիլ ես մոտ եմ դրան և դրա համար էլ գործառում եմ հին համեմատություններ: Ի՞նչ տեղ կարելի կլիներ գտնել ձեզ համար հին լուսավորության մինիստրության մեջ: Ես փնտուցի, փնտուցի և ոչինչ չգտանույնիսկ մոտավորապես հարմար:

Դետք է կարծել, որ ձեր խնդիրը, հիմնական խնդիրը—դա դպրոցը, ուսուցչական միջավայրը քաղաքականապես թափանցելն է, այն հաշվով, որպեսզի օգնեք պարտիային ու սովետական իշխանությանը՝ սովետական երեխաների կոմունիստական դաստիարակության գործում: Ահա այստեղ հանդես եկան շատ ընկերներ և գեկուցումներ արին

իրենց աշխատանքի մասին: Զգացվում է, որ ներկա խորհրդակցությանը հավաքվել են կուլտուրական մարդիկ, կրթություն ունեցող մարդիկ: Ես կարող եմ նշել, որ գեկուցումները դուք բայց եք անում: Առավել փայլուն զեկուցում արեց Բելոռուսիայի կոմսոմոլի կենտկոմի քարտուղարը: Բայց ես կարծում եմ, որ նա կարող էր մի ուրիշ զեկուցում անել, եթե չվախենար խճնուրույնությունից: Քստ էության նրա զեկուցումը չէր տարբերվում մյուս զեկուցումներից: Բովանդակության խմաստով ձեր բոլոր զեկուցումները միատեսակ են: Ինչո՞ւ են միատեսակ: Որովհետեւ դրանք կրում են, այսպես ասած, կազմակերպական-վարչական-կարգապահական բնույթ: Դուք բոլորդ այստեղ խոսում էիք հսկողության տեսակետով և իշխանավորի տոնով: Այդ առաջին խոչը թերությունն է:

Բավականին հատկանշական է, որ ձեզնից ոչ մեկը կանգ չառավ դասավանդման մեթոդիկայի վրա, ոչ մի մարդ ոչ մի խոսք չասաց սովետական ուսուցչության ընդհանուր կուլտուրական մակարդակի մասին և առանձնապես կոմերիտական-ուսուցչիչների, որոնք պետք է առաջատար դեմքերը լինեն դպրոցում: Ես ձեզ հարցնում եմ. հանդիպել եք դուք արդյոք կոմերիտական ուսուցչիչների մեջ այդպիսի առաջատար մարդկանց՝ մանկավարժության կամ թե դպրոցական աշխատանքի մի որևէ այլ բնագավառում: Եթե հանդիպել եք, ասքա ուրեմն այդ մասին հարկավոր էր ասել: Խսկ եթե չեք հանդիպել, ապա ուրեմն այդ խայտառակությունն է ձեզ համար: Զէ՞ որ այդպիսի մարդիկ անկասկած կան մեր դպրոցում, չի կարող պատահել, որ նրանք չլինեն: Այդ շատ կարեւոր հարց է: Մինչդեռ դա կարծես թե չի էլ կանգնած ձեր տեսադաշտում: Քանի որ դուք աչքաթող եք արել այդ հարցը, ապա այդ նշանակում է, որ ձեր դերը դուք հասկացել եք դեռևս ոչ բոլորովին:

Լինել կոմսոմոլի կազմակերպության քարտուղար դըպրոցական երիտասարդության ու պիտներների մեջ տարվող աշխատանքի գծով—այդ նշանակում է օրինակ լինել հարյուրավոր ու հազարավոր ուսուցչիչների համար: Զէ՞ որ

Դուք ինքներդ ասացիք այստեղ, որ մեզ մոտ ուսուցիչների 30 տոկոսից ոչ պակասը կոմերիտական հասալի են: Դե՛ւ, իսկ եթե նրանք օրինակ են վերցնում ձեզնից, ապա, հավանաբար, նրանք նույնպիսի, կազմակերպական-վարչական-կարգապահական գեկուցումներ են անում: Դժբախտաբար, ձեզնից և ո՛չ մեկը չասաց, թե ինչպես են ապրում ու աշխատում կոմերիտական ուսուցիչները: Այդ երկրորդ խոչոր թերությունն է:

Այնուհետև: Եթե դուք ձգտում եք կարգ ու կանոն մտցնել դպրոցում, —իսկ դրան անհրաժեշտ է ձգտել, — ապա այդ պահանջում է ամենից առաջ բարձրացնել ուսուցչի հեղինակությունը: Ես չեմ վերցնում առանձնակի դեպքեր, երբ հանդիպում են ուսուցիչներ, որոնք հեղինակություն չունեն կամ այն պատճառով, որ թույլ են իմանում իրենց առարկան, կամ այն պատճառով, որ իրենց առարկան լավ իմանալով հանդերձ, չեն կարողանում այն ավանդել, կամ այն պատճառով, որ ընդհանրապես աշխատում են երերազով: Ես վերցնում եմ այն դեպքերը, երբ առկա են ուսուցիչների հեղինակության ամման համար օբյեկտիվ ու սուրբեկտիվ պայմանները, և հարց եմ տալիս ձեզ. դուք ի՞նչ եք արել այդ հեղինակությունը բարձրացնելու ու ամրապնդելու համար: Դժբախտաբար, դուք ամենենին կանգչառաք այդ հարցի վրա, դուք նույնիսկ չպատմեցիք՝ բարձրանո՞ւմ է արդյոք ընդհանրապես, թե չի բարձրանում ուսուցիչների հեղինակությունը, իսկ եթե բարձրանում է, ապա ուրեմն այդ ի՞նչպես է ապահովովում, ի՞նչ ճանապարհով է ձեռք բերվում: Այդ երրորդ խոչոր թերությունն է:

Այնուհետև: Ես գտնում եմ, որ կոմսոմոլի կոմիտեներ՝ դպրոցական երիտասարդության ու պիոներների մեջ աշխատանք տանելու գծով աշխատող քարտուղարները պետք է լինեն շատ կուտուրական մարդիկ: Սրանով ես բոլորովին չեմ ուզում ասել, որ դուք պետք է լինեք նեղ մասնագետներ—մանկավարժներ: Ո՛չ, այդ մասին չէ խոսքը: Թերեւս, եթե դուք լինեք նեղ մասնագետներ—մանկավարժ-

ներ, ապա կարող եք ինչոր բան նույնիսկ փչացնել ձեր աշխատանքում: Դուք պետք է լինեք բարձր-կուլտուրական մարդիկ ընդհանուր էրուղիցիայի խմաստով, այսինքն դուք պետք է հիմնալիկան հարցերի վերաբերյալ, գիտության, արվեստի ու տեխնիկայի հիմնական ճյուղերի վերաբերյալ ընդհանուր, ու մասնագիտական աշխատություններին, դուք պետք է լավ իմանաք գեղարվեստական գրականությունը և այլն, որովհետեւ դուք օրինակ եք հանդիսանում կոմերիտական ուսուցիչների համար: Դուք պետք է բարձր-կուլտուրական լինեք՝ ուսուցիչների հետ ճշշտ վարչել կարողանալու խմաստով, ընդհանրապես մարդկանց հետ վարչել կարողանալու խմաստով, տակտի իմաստով: Եթե դուք տիրապետեք կուլտուրայի այդ տարրերին, ապա դուք ավելի հեշտ ու ավելի շուտ կիմանաք սովորական ուսուցչության հոգեկան պահանջմունքներն ու շահերը, դուք առանց դժվարության կիմանաք, թե մարդիկ ինչ են կարդում, ինչպիսի աշխատություններ են ամենից ավելի սիրում, ինչպես են վերաբերյալում դրականությանն առհասարակ, և, վերջապես, ձեզ համար ավելի հեշտ կլինի իմանալ ուսուցչության ու դըպրոցականների տրամադրությունը: Միայն այն ժամանակ դուք կդառնաք պարտիայի ու սովորական իշխանության իսկական օգնականները դպրոցականների կոմունիստական դաստիարակության գործում: Դժբախտաբար, այդ մասին դուք նույնպես ոչինչ չասացիք: Այդ չորրորդ խոչոր թերությունն է:

Ինձ թիվում է, որ դուք պետք է ձեր գեկուցումներն անեք բոլորովին այլ կերպ: Դատելով շատ տվյալներով և մանափորապես նրանով, որ դուք զուրկ չեք պերճակուության չնորհքից, այդ բանին ձեր ուժը լիովին կպատի: Ճիշտ է, դրա համար հարկավոր կլինի լրջորեն աշխատել, շատ բանի խորամուխ լինել, քանի որ այստեղ՝ ձեզ կհետամտի վտանգը, այստեղ կարող են լինել վիճեցումներ, սխաներ: Բայց կոմերիտականներին սպական չէ վախճանալ դժվարություններից և տեղի տալ վտանգների

առաջ: Զեր ելույթներում պետք է աղբյուրի պես խիթ ստեղծագործ միացն ու նախաձեռնությունը: Իհարկե, երբ այդ անհրաժեշտ է, ապա հարկավոր է և ունենալ կազմակերպական-լարչական-լարգապահական թեքում զեկուցման մեջ, բայց այնուամենայնիվ դա հարկավոր է լցնել քաղաքական բովանդակությամբ և ձգտել, որպեսզի դեկուցումից հորդեն այն կուլտուրական արժեքները, որոնք աճում ու զարգանում են սովորողների մեջ, ուսուցիչների մեջ:

Առանձնապես ես ուզում եմ դիմել կին-կոմերիտականներին: Ընկերներ, ժողովրդական լուսավորությամբ զբաղվող կոմերիտական աշխատղների մեջ դուք ամենից ավելի կուլտուրական մարդիկն եք, որովհետեւ կուլտուրական երիտասարդներին մենք մշտապես քաշում-տանում ենք բոլոր մյուս տեղերը, սկսած ավելիացիայից և վերջացրած հանքային գործով: Ժողովրդական լուսավորության բնագավառում ամենից ավելի աշխատառ են կին-կոմերիտականներ: Բայց բանի էության ժողովրդական լուսավորության ասպարեզը տրված է ձեզ, կին-կոմերիտականներիդ «կազարով» և ձեզ վրա է ընկնում գլխավոր պատասխանատվությունը դպրոցի համար: Այդ պատճառով էլ դուք առաջին հերթին պետք է բարձրացնեք կոմերիտական հասակի ուսուցիչների կուլտուրական մակարդակը, որոնք մեզ մոտ այնպես շատ են:

Այստեղ խոսեցին մի ուսուցչուհու մասին, որը չի լուծել խնդիրը և որին այդ պատճառով համարում են վատ ուսուցչուհի: Այդ մեխանիկական, բացարձակապես սիսալ մոտեցում է: Իսկ ո՞րտեղ մենք դանենք այնպիսի վիրտուոզներ, որոնք կարողանային լուծել ամեն մի խնդիր: Ահա իմ որդին դասատու էր մի միջնակարգ ուսումնական հաստատությունում: Մի անգամ ես հարցը իրան,

— Դու ի վիճակի՞ ես արդյոք պատասխանելու այն բոլոր հարցերին, որոնք ծագում են դպրոցականների մոտ քո առարկայի գծով:

Նա ասում է.

— Մի՞թե ես կարող եմ բոլոր հարցերին պատասխանել: Երբ ինձ հարցնում են և ես չեմ կարող պատասխանել, այն ժամանակ ես ասում եմ. հիմա չեմ կարող պատասխանել ձեր այդ հարցին, ես կպատասխանեմ հետեւյալ անգամ:

Իհարկե, երբ ուսուցչին նայում են 40 խորամանկ մանկական աշքեր, որոնցից կայծկլտում է նենդ միտքը՝ «այ, մենք քեզ նեղն ենք զցել», այն ժամանակ ուսուցչի համար հեշտ չէ: Բայց այնուամենայնիվ ուսուցիչը պարտավոր է ուղղակի ամել աշակերտներին. այժմ այդ հարցին ես չեմ կարող պատասխանել, որովհետեւ չդիտեմ, իսկ հետեւյալ անգամ կաշխատեմ ամեն ինչ պարզաբանել: Ըստիս, այդ կլինի մանկալարդի աղնիվ մոտեցումն աշակերտներին, իսկ աշակերտներին հարկավոր է վարժեցնել աղնլության:

Իմ տանը վեց հոգի բարձրագույն կրթությամբ են, նրանց մեծ մասը՝ ինժեներներ են, հետևաբար մաթեմատիկան պետք է լավ իմանան: Բանն այն ժամանակ էր, երբ իմ ամենակրտսեր գումարը սովորում եր դեռևս միջնակարդ գլրոցում: Պատահում էր, որ նա նստում էր դասերին և սկսում էր խնդիր լուծել: Ավագ տղաներս մեկը մյուսից առաջ ընկնելով սկսում էին նրան օդնել: Բոլորը լուծում էին խնդիրը և, երեակայեք, երբեմն չէին կարողանում միանդամից լուծել մոռացած էին լինում: Թվում էր, թե հենց նրանք է, որ պետք է զլուխ հանեին՝ ախրն ինժեներներ են և լավ գիտեն մաթեմատիկան: Սակայն ձախողվում էին: Նշանակում է, այդպիսի առանձին դիպլամածներով դեռևս չի կարելի դատել, թե մարդ գիտեիր առարկան, թե չդիտե, լավ ուսուցիչ է նա, թե վատ:

Ուսուցչի հեղինակությունը միմիայն վարչական ճանապարհով բարձրացնել չի կարելի: Բայց ահա երբ մենք տեսնում ենք, որ սկսում են այս-ինչ կամ այն-ինչ ուսուցչին խայթել, ապա այստեղ հարկ կամ միջամտության, այլապես դրանով խախտվում է ոչ միայն տվյալ ուսուցչի հեղինակությունը, այլև ընդհանրապես ուսուցչության:

Եթե մենք ուզում ենք բարձրացնել ուսուցչի հեղինակությունը, ապա հարկավոր է այդ հարցին մոտենալ խիստ գգուշաբար: Իհարկե, վաստ է, երբ ուսուցիչն ասում է, թե նա առանց ակնոցի չի տեսնում, իսկ ինքն ընդհանրապես ակնոց չի կրում: Բայց դրա հետ միասին պետք է հիշել, որ աշխարհում չի եղել և չկա մի այնպիսի խմաստուն, որ կարողանար պատասխանել ամեն մի հարցի: Ուսուցչի հեղինակությունը պետք է բարձրացնել բնակչության բոլոր հասակային միջնախավերում դեպի նա խորը հարգանք դաստիարակելու ճանապարհով, նրա շուրջը ընդհանուր հարգանքի լուսապատճենու ճանապարհով:

Այ, ինձ թվում է, որ հարկավոր է դասավանդել կոմ-  
երիտական գծով ոչ թե որպես պաշտօնական շրջաբերա-  
կան, այլ որպես չգրված օրենք, որը պետք է դառնա մեր  
ամբողջ կոմսոմոլի տրադիցիան: Եվ դուք, կոմսոմոլի կո-  
միտեների՝ դպրոցական երիտասարդության և պիոներների  
մեջ աշխատանք տանելու գծով աշխատող քարտուղարներդ,  
պետք է լինեք այդ օրենքի առաջին և ամենանախանձա-  
խնդիր անցկացնողները, որովհետեւ ուսուցչի հեղինակու-  
թյան բարձրացումը—դա մեր պարտիայի ու կոմսոմոլի  
ընդհանուր դիմուն է:

Այստեղ շատ խոսեցին դպրոցականների առաջադիմության մասին և մեջ բերին զանազան տոկոսներ։ Իհարկե, տոկոսները նշանակություն ունեն ընդհանուր պատկերը սրարդելու համար։ Բայց դուք հոգով թաքածնի վարիչներ չեք։ Ընդհանմին այդ տոկոսները դուք ձեռք եք բերում առանց հատուկ աշխատանքի, պահանջելով դրանք պատրաստի ձեռվ՝ ուսուցիչներից և դպրոցների դիրեկտորներից։ Հետեւաբար, ձեզ հարկ չի լինում կատարել նույնիսկ տարրական հաշվային աշխատանք։ Խղճով ասած, ես ձեզ նից անհամեմատ ավելին էի սպասում։ Ես սպասում էի, որ դուք կպատմեք, թե ինչ է ծածկվում այդ տոկոսների հետեւում։ Դուք պետք է տայիրք գրության վերլուծությունը թեկուղ և մանկավարժական տեսակետից։ Բայց ոչ մի այդպիսի բան ես չլսեցի ձեզնից։

ՄԵՆՔ հիմնալի կերպով գիտենք, որ մի ուսուցչից բնագանց գնահատական ստանալը շատ հեշտ է, իսկ մյուսից՝ շատ դժվար: Ինուում են նույնիսկ այնպիսի ուսուցիչներ, որոնք սկզբունքորեն չեն դնում գերազանց գնահատականներ, հայտարարելով, որ առարկան իրենք միայն գիտեն «գերազանց»: Բայց նույնպես և այստեղ հարկավոր է հասկանալ: Մեզ մոտ կան հրաշալի մանկավարժներ, հատկապես հները, որոնք խիստ սիրում են իրենց առարկան, հրապուրվում են իրենց առարկայով, լավ ափանդում են այն: Դպրոցականները խորապես հարցում ու սիրում են այդպիսի ուսուցիչներին, իսկ նրանց հետ միասին և նբանց առարկան: Թեսեատր այդ ուսուցիչները իրենց գնահատականները դնում են զիջողաբար, բայց կարելի է ապրիորի ասել, որ աշակերտները նրանց առարկան գիտեն անհամեմատ ավելի լավ, քան այն դասատունների առարկան, որոնք հնարավոր են գտնում գերազանց գնահատական դնել միայն իրենք իրենց: Ահա այս կողմի վրա դուք նույնպես ուշադրություն չդարձրիք:

Ընդհանրաբես եմ մի վորք զարմացած եմ, որ դուք սահմանափակվեցիք միայն ձևական հաշվետվությամբ:

Արտահայտվելով մեր քննադատների լեզվով, ձեր գեկուցումները կրում են ավելի շուտ ֆորմալիստական բնույթ, քան սոցիալիստական ռեալիզմի բնույթ։ Կարծեմ, ԲՐՅՈՒՍՈՎՆ է ասել. «Ես այն պատճառով եմ սիրում երիտասարդությանը, որ ՀԵՆՔԵԼՈՎ նրա վրա, կարելի է առաջ շարժվել»։ Եվ այդ ճիշտ է։ Մինչդեռ ձեզ մոտ շարժումը գեղի առաջ աննշան է, թեաբետե դրա համար մեծ հնարավորություններ կան։ Դուք Հո ժողկրթաժնի վարիչներ չեք, որոնք ծանրաբեռնված են վարչա-տնտեսական գործերով, սկսած վերանորոգումից և վերջացրած դպրոցի կարգավահանությամբ։ Դուք համեմատաբար ավելի շատ ազատ ժամանակ ունեք, քան ժողկրթաժնիների վարիչները։ Դուք պարտիայի ու սովետական իշխանության օդնականներն եք հանդիսանում ոչ այնքան դպրոցների վերանորոգման գծով, —թեաբետե այստեղ դուք պետք եք օգնեք,

երբ այսէ պահանջվում է, —որքան որ հասունացող սերըն-դի կոմունիստական գաստիարակության կազմակերպման ու արահօվման գծով: Դուք, վերջապես, ոչ թե անկողմ-նակալ գիտողներ եք, այլ, ինչպես ևս ենթադրում եմ, բո-ցավառ սովետական հայրենասերներ: Եռամդը ձեզնում պետք է եռա, խոկ եթե այն չի եռում, ապա դուք էլ ի՞նչ երիտասարդություն եք, էլ ի՞նչ սովետական հայրենասեր-ներ: Դուք պետք է ձգտեք առաջ ու առաջ, դուք պետք է որսաք յուրաքանչյուր նոր ակտուալ հարց: Սակայն դրա համար, մեկ անգամ ևս կրկնում եմ, դուք պետք է ունենաք մեծ կուրտուրա: Եթե այդ իմ ձեռքին լիներ, ես կստիպե՛ի ձեղ օրսական առնվազն հինգ ժամ կարդալ գրականություն (գեղարվեստական, արվեստի, գիտության, տեխնիկայի գանապան հարցերի վերաբերյալ և այլն), որպեսզի դուք լինեք դրագետ, կուլտուրական, կրթված, որպեսզի ուղա-ծըդ սկզբունքային ու գործնական հարցը ծագելիս ուսու-ցիչն զգար. օ՛, այստեղ Գիտությունների Ակադեմիայի հու է փշում: Այ, այն ժամանակ էլ ձեր հեղինակությունը մեկեն կրաքրանա ուսուցչության աչքում:

Որքան ևս գիտեմ, ձեականորեն դուք իշխանություն չունեք դպրոցի վրա, բայց դուք կարող եք հսկայական ազդեցություն ունենալ դպրոցի վրա, և այդ իշխանով պարտիան ձեզնից մեծ ու արդյունավետ աշխատանք է սպասում: Դրա համար, նորից ու նորից եմ կրկնում, կոմ-սոմովի կոմիտեների՝ դպրոցական երիտասարդության և պիտներների մեջ աշխատանք տանելու գծով աշխատող քարտուղարները պետք է լինեն բարձր-կուլտուրական մար-դիկ, ըստ էության նրանք պետք է իրենց կուլտուրայով առաջինը լինեն մանկավարժական միջավայրում:

Կուլտուրայի հետ միասին դուք պետք է դպրոց մըտ-ցնեք նաև բոլշևիկյան պարտիականությունը: Ի՞նչ է նշանա-կում պարտիականություն մտցնել: Այժմ կարծես թե զործը խիստ հասարակ ու պարզ է դարձել. կա «Համբկ(ը)Պ պատ-մության համառոտ դասընթաց», ուսումնասիրի՛ր դասա-գիրքը—և բանը վերջացած է: Սակայն, ընկերնե՛ր, դասա-

դերքը միայն դասագիրք է, և պարտիականություն սովո-րեցնել հարկավոր է ոչ միայն լոկ դասադրքով: Անցուշտ, «Համբկ(ը)Պ պատմության համառոտ դասընթացը» հանդի-սանում է մարքսիստական-լենինյան աշխարհայացքի դար-դացման հզոր զննքը: Բայց չէ՞ որ բացի դրանից հարկա-վոր է, որպեսզի մարդկան միայն պարտիայի պատմությունը ըմբռնի մարքսիստորեն, այլ որպեսզի նա մարքսիստորեն ըմբռնի ընդհանրապես և՛ աշխատանքը, և՛ կենցաղը, և՛ կյանքը, որպեսզի նա պարտիականորեն, բոլշևիկորեն մո-տենա այն կոնկրետ հարցերին, որոնք ծագում են ամեն օր և ամեն քայլափոխում:

Մինչդեռ երբ դուք սերտում եք դասագիրքը, ապա եր-բեմն վախենում եք դուրս գալ նրա առանձին պարագանե-ների շրջանակներից: Բայց եթե դուք սահմանակալվե՞ք այդ շրջանակներով, ապա դուք կլինեք վաս մարքսիստ-ներ, որովհետեւ յուրաքանչյուր պարագանեաֆը ոչ թե դումա է, այլ զործողության ղեկավարություն: Բոլշևիկյան պարտիայի պատմությունն ուսումնասիրելիս ցանկալի է այդ պարագանեաֆները հագեցնել ոչ միայն անցյալի փառ-տերով, այլև այսօրվան օրիւա բովանդակությամբ, նրանց էությունը պարզելով նաև ժամանակակից կյանքի օրինակ-ներով:

Ահա այստեղ, օրինակ, ասացին, որ եղել է անձնա-սպանություն: Եթե ես դասավանդեի պարտիայի պատ-մությունը, ապա ես միտուցե պատմության և վաս դասա-տու լինեի, բայց գրա փոխարեն արդեն անպայման կկլչեի այդ դեպքից և լայնորեն կշարադրեի համապատասխան պարագանեաֆը: Ես ցույց կտայի, որ այդ կոմունիստը վար-գել է ո՛չ մարքսիստորեն, որ նա ըստ եռության ոչ թե կո-մունիստ է, այլ միայն իրեն անվանել է կոմունիստ, որով-հետեւ կոմունիստը չի կարող այդպես գործել: Եթե դուք այդպես ուսումնասիրեք պարտիայի պատմությունը, ապա դուք իրոք կամեք, այսինքն՝ ոչ միայն կամրապնդեք ձեր գիտելիքները մեր պարտիայի պատմության վերաբերյալ, այլև ձեր գիտակցության մեջ կհաստատեք կոմունիստական

սկզբունքները, տվյալ դեպքում—պրոլետարիան, կոմունիստական էթէկան:

Եթե դուք, կոմսոմոլի կոմիտեների՝ դպրոցական երեսասարդության և պիոներների մեջ աշխատանք տանելու գծով աշխատող քարտուղարներու, որպես ղեկավարներ, վախենաք այդ հարցերից, ապա ձեզ համար շատ դժվար կլինի: Դուք պետք է համարձակորեն բարձրացնեք այդ հարցերը մանկավարժական միջավայրում, ձգտելով հասնել մարզականական լուծման:

Տեսնում եք, ընկերներ, ես բարձր գնահատեցի ձեր դերն ու ձեր նշանակությունը: Բայց այդ ձեզ վրա մեծ պատասխանատություն է դնում: Մասնավորապես այդ պահանջում է ճեղանից այն, ինչի մասին ես խոսեցի ամենասկզբում,—որպեսզի ձեր զեկուցումները լցված լինեն քաղաքական բովանդակությամբ, որպեսզի նրանք իրոք լինեն պարտիական զեկուցումներ: Այդ ձեզ համար կլինի մարզսիզմի, իսկական մարզսիզմի առաջին դասը: Եվ ահա, եթե դուք հասնեք այդ բանին, եթե դուք հաղթահարեք տրափարետայնությունն ու դոզմատիզմը զեկուցումներում, ապա այդ անխուսափելիորեն կանդրադառնա և ձեր ամրող աշխատանքում: (Բուռն ծափահարություններ):

Հրապարակում է առաջին անգամ:



ՃԱՌ, ՄՈՍԿՎԱ ՔԱՂԱՔԻ ԲԱՌԻՄԱՆԻ ՌԱՅՈՆԻ  
ԼՐԻՎ ՄԻԶՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՈՒԹԵՐՈՐԴԻ,  
ԻՆՉԵՐՈՐԴԻ ԵՎ ՏԱՍԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ  
ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ

1940 թ. ապրիլի 7-ին



Ընկերներ, ես չեմ կարող այլ ցանկություններ ունենալ, ինչպես և դուք բոլորդ, բացի այն, որ դուք լավ սովորեք: Այդ ընդհանուրիս ցանկությունն է, հայրերի ու մայրերի ցանկությունը, կառավարության, մանկավարժների, ավագ սերնդի ցանկությունը:

Բայց բանը, իհարկե, բարի ցանկությունները չեն, այլ այն, որ ձեզ հարկավոր է սովորել և լրջորեն սովորել: Դպրոցը—այդ այն միակ տեղն է, որը վարժեցնում է ձեզ սիստեմատիկորեն աշխատելու: Ինչքան էլ մարդ ձգտի անկախ գոլորշից, առանց զպրոցի, ինքն իրեն, ստանալ գիտելիքներ, նա, այնուամենայնիվ, ինչպես ասում են, ինքնուս կլինի:

Ոմանք մտածում են. դեռ, ինչ բան է դպրոցը, —եթե ես ավարտեմ դպրոցը և ոչ առանձնապես լավ, ապա այդ չէ՞ որ կնշվի միմիայն ատեսատում, և ո՛չ կյանքում: Ով այդ պես է մտածում, նա, իհարկե, իրավացի չէ: Դպրոցը մարդուս տալիս է սիստեմատիզացիայի ենթարկված գիտելիքներ, նրան նախապատրաստելով որակյալ աշխատանքի համար: Իսկ ձեր մեծամասնությունը կլինի, հավանաբար, որակյալ աշխատողներ: Այդ պատճառով էլ ձեզ հարկավոր է համառորեն, հաստատակամորեն սովորել ու սովորել:

Ով ուզում է ապագայում որակյալ աշխատող լինել, նա պետք է անցնի սովետական դպրոցը, սովորի սխառեմատիկաբար աշխատել գրքի վրա և ինքն իր վրա: Ով չանցնի դպրոցը, նրա համար դժվար կլինի կյանքում, նրա համար հետո դժվար կլինի աշխատելը: Այդ թերությունը, այսինքն սխառեմատիկացիայի ենթարկված գիտելիքների ու ընտելությունների բացակայությունը դեպի սխառեմատիկ աշխատանքը, միշտ և ամեն բանում կարտահայտվի, մշտապես ձեզ կհետապնդի կրնկակոխ, ինչպես ստվերը: Այս, իմ իջի այլոց, ես զգացել եմ և զգում եմ ինձ վրա մինչև այժմ: Ուստի հարկավոր է օգտագործել դպրոցը—առաջինից մինչև յոթերորդ կամ մինչև իններորդ դասարանը—որքան կարելի է ավելի լրիվ՝ որպես սխառեմատիկացիայի ենթարկված գիտելիքների վճռողական աղբյուր:

Բոլոր դպրոցականները պետք է հիշեն, որ միայն այն մարդը կունենա որևէ նշանակություն հասարակական և պետական կյանքում, ամեն մի օգտակար ասպարեզում, ով կարողանում է աշխատել սխառեմատիկորեն, գործիմացությամբ: Իսկ այն մարդիկ, որոնք փայլում են միայն մակերեսային կուլտուրականությամբ, որոնք ձեռք են բերում լոկ արտաքին կուլտուրական փայլ, Օնեգինի տիսկի մարդիկ, որոնք ընդունակ են խոսելու ամեն ինչի մասին քիչ ու միշտ էական բան չգիտեն, —այդպիսի մարդիկ նշանակելի դեր չեն խաղում և չեն խաղա սովետական հասարակության ու պետության կյանքում:

Այս ամբիոնից այսօր ելույթ ունեցան ուսման գերազանցիկները: Ես պետք է ասեմ ձեզ, ընկեր գերազանցիկներ, որ դուք խոսում եք լավ, դեղեցիկ, բայց—ներեցեք շիտակ լինելուս համար—բոլորովին ո՛չ օրիգինալ կերպով: Անշուշտ, այսպիսի շիտակությունը վիրավորական է ձեզ համար, բայց ես այդ ասում եմ ոչ թե նրա համար, որ պեսզի ձեզ վիրավորեմ, այլ նրա համար, որպեսզի դուք հասկանաք այն ամենադիմակորը, ինչը որ անհրաժեշտ է ուսման մեջ: Զեր ճառը կառուցված է դրագետ կերպով, բծախնդրություն անելու ոչ մի պատճառ չկա բացարձակա-

պես: Բոլոր տեսակետներից այդ սահուն ճառ է: Զեր ճառ կարելի է զետեղել և աշակերտական պատի թերթում: Եմքաղչիրը դրա համար նկատողություն չի ստանա: Բայց այդպիսի ճառը ոչ ոքի չի ալեկոծի, նա ոչինչ չի տա ո՛չ մտքին, ո՛չ սրտին: Ակար չէ որ դուք երիտասարդություն եք: Զեղ մոտ նույնիսկ սովորական ճառը ստանում է հուզիչ ձեւ: Իսկ ամենից լավ տեղ է հասնում այն ճառը, որն ամենազգայուն թերերին է դիմում, հավանություն կամ առարկություն է առաջացնում: Այդ առաջին նշանն է այն բանի, որ հուսորն ունի մի ինչոր ինքնուրույն, կենդանի միաց:

Բայց, ընկերներ, այդ ձեռքիրովի բան է: Դուք տակավին երիտասարդ եք, ձեզ համար ամեն ինչ դեռևս առջնումն է: Ուստի և այդպես համարձակ ասում եմ ձեզ, որ ձեր ճառը բոլորովին էլ օրիգինալ չէ: Եթե դուք հիսուն տարեկան լինեիք, ապա ես այդ բանը ձեզ չէի ասի, վախենալով, որ դուք երբեք օրիգինալ կերպով չեք խոսի: Զեղ համար դեռևս ամբողջ կյանքը առջևումն է, և դուք կխոսեք օրիգինալ կերպով: Դրանում ես չեմ կասկածում: Բայց առայժմ որ ձգտում եք խոսել ոչ սեփական, այլ օտար, արդեն պատրաստի Փրազներով: Զեր ելույթներում չի դրսեռզում սեփական, կենդանի միտքը: Զեր ճառը—դա լուսնյակի լույս է, որը չի տաքացնում:

Զեր բոլորից, թերեւս, միմիայն վերջին հուսորը, ընկեր կարիքը, խոսեց իր լեզվով: Նրա ճառը ընթացքում նկատելի էր, որ նա կշուղատում է իր Փրազները, որ նրա մոտ կա ինչոր սեփական միտք: Իսկ այդ էլ ամենակարեղորն է:

Ենթաղրենք՝ ձեզ մոտ մի մարդ է եկել կոմսոմոլիքազակերպության կոմիտեից: Նա այնպէս վարժվել է խոսելուն, որ կարող է ճառ ասել երբ ուզես և ամեն մի հարցի վերաբերյալ: Նրա ճառը հոսում է անընդհատ, սահուն ու գեղեցիկ, ինչպես մեծ գետը՝ գեղատեսիլ ափերում: Բայց այդ ճառը գեղեցիկ է միայն արտաքուստ, իսկ ամենագլխավորը, այսինքն հոռի, նրա մեջ չկա: Այդ անվար-

առնդ ծաղիկ է: Եվ այդպիսի հոետորը ոչինչ չի տա, որովհետեւ նա չի մտածում իր Փրազների վրա: Այդպիսի հոետորը չի հափշտակում իր ճառի ներքին բովանդակությամբ: Նրա ճառը լսողները կարող են միայն ասել. ա՛հ, ինչ գեղեցիկ է խոսում: Եվ ուրիշ ոչինչ:

Ենթադրենք այժմ, որ ձեզ մոտ եկել է ոչ թե այդպիսի «ոսկերերան», այլ ալարզապես մի լըմիտ մարդ: Նրա ճառը չի փայլում գեղեցիկություններով և նույնիսկ հաճախ կտըրտվում է: Երեսում է, որ նա մտածում է ու խոսում, խոսում է ու մտածում: Երբ նա կանգ է առնում, կշռադատելով իր Փրազները, ապա ստիպում է իր հետ միասին մտածել և ամբողջ առողջապահային, որը հետևում է նրան, հետևում է նրա մտքի ընթացքին: Այդպիսի հոետորի ճառը լսողները կարող են ասել. նա առաջ մղեց մի որոշ միտք: Այդ մտքին նրանք արձագանքում են. համաձայնում են կամ մերժում, վիճում են կամ հավանություն տալիս, զայրույթ են արտահայտում կամ ողղունում:

Ահա մոտավորապես այդպիսի հոետորի է մոտենում ընկեր կարիքը: Այդպիսի հոետորի սկզբունքներն ու մեթոդը ձեզ բոլորիդ հարկավոր է յուրացնել, որպեսզի դուք մտածեք, որպեսզի հենց ինքներդ կառուցեք ձեր Փրազները, այլ ոչ թե խոսեք պատրաստի, վաղորոք կառուցված Փորձուալաներով: Այն ժամանակ մասնավորապես կերեա՝ դիտեք դուք, թե չդիտեք ուսւաց լեզուն:

Ահա այստեղ հանդես եկան ութերորդ դասարանցիները, ինքներորդ դասարանցիները և տասերորդ դասարանցիները և այն էլ զետ ուսման գերազանցիները: Թեորիապես խոսելով, այսինքն ուսումնական ծրագրերից ելնելով, նրանք պետք է լավ գիտենան ուսւաց լեզուն և ճիշտ արտահայտվեն ուսեւերեն: Բայց, դժբախտաբար, ես չեմ կարող ասել—գիտեն նրանք, թե չդիտեն ուսւաց լեզուն, որովհետեւ նրանք ոչինչ չասացին իրենցը, որովհետեւ նրանք խոսեցին պատրաստի Փրազներով, արաֆարետով: Ա՛յ, երբ ընկեր կարիքն էր խոսում, նա ինքն էր կառուցում իր Փրազները: Իսկ երբ մարդ ինքն է կառուցում իր Փրազները, այն ժամանակ կա-

րելի է տեսնել—դիտեն նա, թե չդիտեն ուսւաց լեզուն, դըպ-քոցը նրան սովորեցրել է, թե չի սովորեցրել շարադրել իր մտքերը: Այս այդ ճանապարհը, այսինքն ընկեր կարիքի ճանապարհն էլ ալիսի բռնեն սովետական դպրոցականները, եթե նրանք իրոք ցանկանում են աշխատել Արցորեն, եթե նրանք դպրոցին չեն նայում, որպես աստծուց տրուած պատժի:

Այդ ես ձեզ ասում եմ ոչ հենց այնպես՝ պարզամտորեն: Իրոք, լինում է այնպես, որ ոմանք գպրոցին, ուսմանը նայում են որպես ինչ-որ հարկադրական և ծանրաբեռնող միքանի, որպես քավարանի, որը հարկավոր է անցնել «ըլամիսը» ընկերու համար: Եթե դուք այդպես չեք նայում, եթե դուք դժոնում եք, որ ուսումը—այդ երջանիկ մի հնարակորություն է, որն անհրաժեշտ է օդուագործել մինչև մերջը, որպեսզի կրթություն ստանաք և ընդլայնեք ձեր մտահորիզոնը, ապա հարկավոր է որ ինքներդ կառուցեք ձեր ճառը: Այդ միատեսակ չափով վերաբերում է և՛ ձեզ շարադրություններին, և՛ զանազան մաթեմատիկական խընդիրների լուծմանը, և՛ գծադրության ու նկարչության վարժություններին և այլն:

Ենթադրենք, որ դուք շարադրություն եք գրում և այդ ժամանակ հաճախ դիմում եք ավելի առաջադեմ աշակերտների «ծառայությանը» կամ պարզապես «թխում եք» գաղտաթերթիկից (ապարգալկա): Այդ, ընկերներ, բանի պետք չէ. այդպես դուք երբեք և ոչինչ չեք սովորի: Ավելի լավ է գրել մի փոքր ավելի վատ, բայց անպայման ինքնուրույն: Թող որ դուք ստիպված լինեք հազար անդամ փոփոխելու և արտադրելու այն, ինչ դուք ինքներդ եք շարադրում, բայց դուք մի՛ սարսափեք դրանից և մի՛ խնայեք ձեր ուժերը. այդ ձեզ կսովորեցնի ինքնուրույն աշխատանքի, և հենց դրանումն էլ արտահայտվում է ինքնուրույնությունը:

Կամ թե վերցնենք, օրինակ, զեկուցումները: Մեզնում շատ կան զանազան գեկուցողներ: Լինում են այնպիսի զեկուցողներ, որոնք կարող են խոսել երկու, երեք և նույնիսկ հինգ ժամ, զլուխ պրծացնելով ընդհանուր տեղիներով և

նետելով աղմկարար լոգունդներ, որպեսզի մարդիկ յուրաքանչ-  
չյուր 15—20 բոպեն մեկ ծափահարեն: Այդ դժվար չէ: Այդ  
ամենից հեշտն է: Այդպիսի գեկուցման համար մեծ խելք չի  
պահանջում: Բայց ահա գեկուցում անել ավելի պակաս  
քանակի խոսքերով, այն էլ այնպիսի խոսքերով, որոնք կըշ-  
ռադատված կերպով ջոկում է գեկուցողը, —թող լինի մինչև  
խել անհարթ, —այդ անհամեմատ ամելի դժվար է:

Այստեղ դուք հավաքել եք ուսման գերադանցիկներին:  
Անշուշտ, երբ հավաքվում են լավագույն աշակերտները,  
այն ժամանակ նրանց հետ հեշտ է համաձայնության դալ,  
թե ինչ է հարկավոր անել, որպեսզի չլինեն հետ մնացող-  
ներ: Բայց վատ չէր լինի հավաքել հետ մնացող աշակերտ-  
ներին և նրանց հետ գրուցել — ինչու են նրանք հետ մնում ե-  
նիչ է հարկավոր անել, որ նրանք հետ չմնան:

Այսօր ես մտադիր չէի ելույթ ունենալ. խղճով ասած,  
ես սպասում էի, որ այստեղ տաք կոփէլ կլինի, որ դուք  
կաղաստեք, թե ինչն է վատ դպրոցում, ինչն է պակաս:  
Մինչդեռ ձեր ժողովը վերածվեց հանդիսավոր միտինդի;  
Բայց որտեղ շատ հանդիսավորություն կա, այնտեղ համախ-  
քիչ է լինում բովանդակալիությունը:

Այսօր այստեղ հանդես եկան լավագույն աշակերտները,  
որոնց ճառերը կրում էին հաշվետու բնույթ: Զդացվում է,  
որ կոլմկախլը նրանց սլարտադրել է այդպես ելույթ ունե-  
նալ: Ընկերներն ասում էին. «Մենք յոթերորդ տեղումն  
էինք, այժմ գտնվեցինք հինգերորդում, հույս ունենք նվա-  
ճելու երրորդ տեղը»: Բայց նրանցից և ոչ մեկը չասաց, թե  
ինչ է նա պատրաստվում անել, ուր է ձգտում զնալ տաս-  
նամյակն ավարտելուց հետո: Իսկ չէ՞ որ դուք, ընկերնե՞ր,  
ավարտում եք միջնակարդ դպրոցը, դուք ինքնուրույն կյան-  
քի շեմքին եք: Եթե ես տասերորդ դասարանցի լինեի, —  
բայց դժբախտաբար, ես այդպիսին լինել չեմ կարող, —ապա  
ինձ համար ավարտական տարվա ամսին սուր հարց  
կեանդնե՞՝ ո՞ւր գնալ: Եվ, անկասկած, ես կորոշեի ճշտիլ,  
թե ուր կդնամ ես:

Միշտ հնարավոր չէ ախր դնալ այնտեղ, որտեղ ուղում

նս: Հավանաբար, ձեզնից շատերը կցանկանային գնալ Ժուռ-  
նալիստիկայի ինստիտուտը —այդ ես գիտեմ անցած տարե-  
ների կոնկուրսներից: Բայց այնտեղ այնպիսի կոնկուրս է,  
որ խիստ դժվար է ընկնել յուրաքանչյուր ցանկացովին: Եվ  
այնուամենայնիվ ո՞ւր գնալ: Թե՞ դուք բոլորովին չեք հե-  
տաքրքրվում այդ հարցով: Այն ժամանակ, այդ վատ նշան  
է: Եվ եթե ձեր կշառադատությունից դուրս է ընկել այդպի-  
սի կարեռը մի հարց, ապա, ըստիս, այդ մեծ սխալ է:  
Իմիջի այլուց, ես շատ կուզել իմանալ, թե ուր է ձգտում  
սովորողների մեծամասնությունը, ո՞ր պրոֆեսիան է հան-  
գիսանում մեր երիտասարդության սիրած պրոֆեսիան: Այդ  
խիստ հատկանշական կլիններ, այդ այլբաների հիման վրա  
կարելի էր մի շարք հետաքրքրական հետեւություններ անել:  
Բայց ես ձեզնից ոչինչ չիմացա և այդ պատճառով այժմ չեմ  
կարող ոչ մի հետեւություն անել:

Այնուամենայնիվ ես չեմ կարծում, թե այդ միտքը ձեր  
գլուխներում չկա: Անկասկած այն զբաղեցնում է ձեզնից  
յուրաքանչյուրին: Ձեր հասակում, պատանեկական հասա-  
կում, յուրաքանչյուր մարդ պետք է մտածի այդ հարցի  
վրա: Կասկած չկա, որ ձեզնից իննը տասերորդը պատրաստ-  
վում է ապագայում սարեր չուռ տալ և համայն աշխարհը  
մերակառուցել իր ուղածի պես: Ախր ես էլ եմ այլպես  
մտածել իմ պատանեկության տարիներին: Կասկած չկա, որ  
այդ մտքերը խմբովում են ձեր գլուխներում, և նրանք չեն  
կարող չխմբովել: Այդ ջահելության բան է:

Բայց այժմ հասել է ժամանակը, երբ պետք է կողմնո-  
քովվել, երբ դուք վերջնական պատասխան պետք է տաք՝  
ուր զնալ: Շատերը մեղնում չափազանց հասարակ կերպով  
են վճռում այդ հարցը. ես կոմերիտական եմ, ապագայում՝  
կոմունիստ, սովետական քաղաքացի, —և գործը վերջացած  
է, «կողմնորոշվեց»: Բայց այդ արդեն չափազանց թեթև  
«կինքնորոշում է»:

Կողմնորոշվել լլջորին —այդ նշանակում է նշել իր կյան-  
քի ուղին, մշակել իր բնալորությունը, իր համոզմունքները,  
գտնել իր կոչումը: Զեղնից յուրաքանչյուրը պետք է դատի

այսպես. Ես սովորական մարդ եմ, այն պետության քաղաքացին, որը շրջապատված է թշնամիներով, որի համար սպայքարելու հարկ կլինի ոչ ավելի պակաս, այլ նույնիսկ ավելի շատ, քան հարկ եղավ ավագ սերունդներին: Վերցրեմք, օրինակի համար, մեր սերունդը, հին բոլշևիկների սերունդը: Մենք սպայքարում էինք ուստական կապիտալիստների ու կալվածատերերի գեմ, որոնք իրենցից ներկայացնում էին համեմատարար թույլ, վատ կազմակերպված և ոչ-բավականաչափ կուլտուրական թշնամի: Իսկ ձեզ հարկ կլինի սպայքարել անչափելիորեն ավելի ուժեղ, ավելի կազմակերպված, ավելի նենդ, քաղաքական սպայքարում, խարեւայության դանաղան մեթոդների ու միջոցների մեջ ավելի մարզված թշնամու դեմ: Այդ ճակատամարտին հարկավոր է սպատրաստվել համառ կերպով ու սիստեմատիկորեն:

Բայց նկատի ունեցեք, որ այդ ճակատամարտը կծավալի ոչ միայն անմիջաբար ֆրոնտներում: Մրոնտներում արդեն ավանդարդային գոտինեմարտերի ժամանակ մեր ուստիողները ցույց են տվել քաջության հրաշքներ: Եվ այստեղ գարմանալի ոչինչ չկա—մի՞թե մեր սովորական, կուլտուրական երիտասարդությունը կարող էր քաջ չլինել: Ո՛չ, այդ ճակատամարտը կընդգրկի մեր կյանքի բոլոր ոլորտները: Նա կհանդիսանա այն սպայքարի սրման բարձրադույն էտապը, որը տեղի ունի սովորական իշխանության գոյության սուածին իսկ օրերից:

Եվ ահա, որպեսզի հաղթանակ ձեռք բերվի այդ վճռական գոտեմարտում, դրա համար անհրաժեշտ է կոփել իր բնալորությունը, իր կամքը ամենօրյա սպայքարում, դրա համար անհրաժեշտ է ճշտիվ որոշել իր տեղը սոցիալիստական շինարարության մեջ, կատարելությամբ տիրապետել իր կյանքում ընտրած դործը:

Բայց այդպիսի ինքնորոշումը խիստ կարեոր է ձեզնից յուրաքանչյուրի առօրյա կյանքում էլ: Երբ դուք կկարողանաք մշակել ձեր բնալորությունը, երբ դուք պարզ կերպով կորոշեք ձեր աշխարհայացքը, երբ դուք կդտնեք ձեր

տեղը և կյուրացնեք ձեր դերը սոցիալիզմի շինարարության մեջ և ամենօրյա սպայքարում, երբ ձեր կյանքի խնդիրը կդառնա արդեն ձեր համոզմունքների կենսադործումը սրակակիւայում, —այն ժամանակ կարելի լլինի ասել, որ միաժամանակ դուք ձեռք բերեք հուսալի իմմունիտետ ընդդեմ ամեն տեսակի կենսական խայթումների, հուսախարությունների: Անը լինում է այսպես. մի աշակերտ ման եկալ, ման եկալ այս-ինչ աղջկա հետ, իսկ հետո դավաճանեց, սկսեց մի ուրեշի հետ ման դալահա և ձեզ մի ամբողջ «դրամա»: Դուք չկարծեք, որ ես այդ մասին խոսում եմ ծեր մարդու կծու հեղնանքով, —ես ինքու էլ երիտասարդ եմ եղել և այժմ հարդում եմ մարդկանց դեռահաս զգացմունքները: Այսպես ահա, անհաստատ, չկողմնորոշված մարդու համար այդպիսի «դրաման» կմրող է չափազանց մեծ նշանակություն ստանալ, և դրանից նրա մեջ կարող է առաջանալ խորը հիասթափություն ընդհանրապես կյանքից, որը ծանր կթողնի երկար տարիներ: Իսկ պարզ ու կողմնորոշված մարդու համար այդպիսի «դրաման» կանցնի համեմատաբար անհիվանդադին կերպով:

Եվ այսպես, անհրաժեշտ է, որ մարդու մեջ որքան կարելի է ավելի շուտ մշակվի բնակլորությունը և կազմակորվի հաստատուն աշխարհայացք: Եթե նա ասի—կենդանաբան պիտի դառնամ, ապա դրանում ամեն ինչ կա: Եվ այն ամենը, ինչ նրանում կա, նա կտա կենդանաբանության բնագավառում աշխատելուն՝ հօգուտ իր հայրենիքի: Դրանումն է այն տարբերությունը, որ կա սովորական կենդանաբանի և կապիտալիստական երկրի կենդանաբանի միջև: Սովորական կենդանաբանը կասի՝ այս ասպարեզում ես անպայման մաքսիմում օգուտ կբերեմ իմ հայրենիքին: Եվ նա կհանի իրեն ճգտածին, նա կանի մեծ դործ: Եվ այդպիսի մարդու համար հարյուր անգամ ավելի հեշտ կլինի տանել ամեն տեսակի կենսական խայթումներ, ճախորդություններ ու դրամաներ, քան այն մարդու համար, որը չունի որոշակի պրոֆիլ կյանքում, որոշակի կոչում, որոշակի իդեա:

Ես անձամբ իսկոտ հարդում եմ այն մարդկաց, որոնք  
մշակել են իրենց համոզմունքներն ու իրենց բնավորությու-  
նը: Բայց, գուցե, ձեզ համար զեռ վաղ է այդ մասին մտա-  
հոգինը: Ոչ, ընկերներ, վաղ չէ: Հավանաբար, դուք լավ  
ոխտեք ընկեր Ստալինի կյանքի ուղին: Արդեն տասնհինգ  
տարեկան հասակում նա դարձավ մարքսիստ, իսկ տասնյոթ  
տարեկան՝ նրան հեռացրին սեմինարիայից այն բանի հա-  
մար, որ նա ուներ որոշակի քաղաքական համոզմունքներ,  
որոնք ամբողջովով ուղղված էին ընդդեմ ցարական ինքնա-  
կալության, ընդդեմ կապիտալիզմի: Տեսնում եք ահա, թե  
ինչպես վաղ ինքնորոշվեց ընկեր Ստալինը: Բայց եթե առաջ  
մարդիկ կարող էին այդպես վաղ ինքնորոշվել, ապա ձեզ  
համար այժմ շատ ավելի հեշտ է լուծել այդ խնդիրը:

Եղրափակման մեջ ես ուզում եմ ձեզ ասել ահա թե նաև  
ինչ: Ինձ ասում էին, որ ձեզնից միքանիսն այսպես են դա-  
սում: ինչու ձգուել բարձրագույն թվանշանի՝ ավարտական  
քննությունների ժամանակ. մեկ է, բուհ չես մտնելու, այլ  
դնալու ես բանակ: Այդպիսի դատողությունը բացարձակա-  
պես սխալ է: Ամենից առաջ չի կարելի այդ գործը դիտել  
թվանշանի տեսակետից: Բանը թվանշանը չէ, այլ այն, որ  
առաջայում այդպիսի ընկերներն արդեն հնարավորություն  
չեն ունենաւ սխալումատիկաբար սովորելու, այսինքն նրանք  
չեն կարողանա լրացնել բաց թողածն այն գիտելիքներում,  
որ տալիս է միջնակարգ դպրոցը: Բացի դրանից, մենք կար-  
ծում ենք, որ ընկերների ճնշող մեծամասնությունը՝ զինվո-  
րական ծառայությունը վերջացնելուց հետո կարող ե մտնել  
բուհերը, եթե նրանք լրավ են ավարտել միջնակարգ դպրո-  
ցը, չխոսելով արդեն այն մասին, որ նրանց նշանակելի տո-  
կոսը կգնա հենց բանակի բարձրագույն ուսումնական հաս-  
տատությունները: Մեզ մոտ շատ ուսումնական հաստատու-  
թյուններ կան կարմիր բանակում, և դրանք կկոմպլեկտա-  
վորին առավելապես նրանցից, ովքեր լավ են վերջացրել  
տասնամյակը: Այդ պատճառով էլ ձեզ հարկավոր է միջնա-  
կարգ դպրոցում սովորել ուժերի լիակատար լարումով:

Բարձրագույն դպրոցը—այդ արդեն այլ բան է, այն-

անդ ձեզ կվիմակվի գործ ունենալ բարձր կարգի ավանդման  
հետ, այստեղ մարդիկ ձևակերպվում են արդեն որպես գե-  
տության որոշ ճյուղի գործիչներ: Իսկ միջնակարգ դպրո-  
ցում մարդիկ միայն սովորում են սխալումատիկաբար աշխա-  
տելու, նրանք միայն դնում են կրթության ֆունդամենտը:  
Ուստի ես գտնում եմ, որ այն ընկերները, որոնք կարծում  
են, թե 'միջնակարգ դպրոցում միտք չունի սովորել ուժերի  
լիակատար լարումով, լուրջ կերպով սխալվում են և կարող  
են անուղղելի վնաս հասցնել իրենց:

Սրտանց ցանկանում եմ, որ այս տարվա տասերորդ դա-  
սարանցիները լինեն լավ մարտիկներ մեր կարմիր բանակի  
շարքերում և դրա հետ միասին՝ մեր բուհերի լավ ուսանող-  
ներ: (Բուռն ծափահարություններ):

Հրապարակվում է առաջին անգամ:



ՀԱՌ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ  
ԴՊՐՈՅՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑԻԿ ՈՒՍՈՒՑՉՆԵՐԻ  
“ՅՈՒԹԵԼԵԾԿԱՅ ԳԱՅԵՏԱ”-ՅԻ ԽՄԲԱԳՐՈՒ-  
ԹՅԱՆ ԳՈՒՄԱՐԱԾ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆԸ

1938 թ. դեկտեմբերի 28-ին



I. ՄԱՐԳՍԻԶՄ-ԼԵՆԻՆԻՑՄԻ ԹԵՇՈՐԻՄՅԻՆ ՏԻՐԱՊԵՏԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

Ընկերներ, մեզ մոտ այժմ շատ են խոսում մարքսիզմ-լենինիզմի ռեռուցիոն թեորիան ուսումնասիրելու մասին, բոլշևիկյան պարտիայի պատմությունն ուսումնասիրելու մասին։ Գլխավորն այստեղ այն է, որ մարդ յուրացնի այդ թեորիայի բուն հությունը, սովորի օգտվել դրանից գործնականում և ըմբռնի մեր պարտիայի ռեռուցիոն պայքարի փորձը։

Կարդալով «Համկ(ր)Պ» պատմության համառոտ դասընթացը, ես հիացա նրա բովանդակության խորությունից, մտքի հստակությունից և շարադրանքի պարզությունից, բայց այժմ բառացի հիշել չեմ կարող, մռացել եմ։ Սակայն բանն այստեղ ոչ միայն հիշելն է, այլ գլխավորը՝ հասկանալն է։ Մարքսիստական-լենինյան թեորիան հավատի հանդանակ չէ, դոգմաների ժողովածու չէ, այլ գործողության զեկավարություն է։ Երբ ոմանք խոսում են մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու մասին, ապա ասում են «խորացված աշխատանք», «առանձնապես խորացված աշխատանք» և այլն։ Սակայն պետք է հասկանալ, որ մարքսիզմ-լենի-

նիզմի մեջ գլխավորը—այդ ոչ թե տառն է, այլ նրա էությունն է, ռեռուցիոն ոգին է։

Ի՞նչ է նշանակում, եթե ասում են «ընդդրկել մարքսիզմ-լենինիզմն ամբողջություն»։ Ի՞նչպես հասկանալ այդ։ Արդյոք այդ հասկանալ որպես մարքսիզմ-լենինիզմի ամբողջ գերիմաստությունը բառացի անդիք անե՞լը՝ արդեն պատրաստի եղբակացությունների և Փորձութաների ձևով։ Թե՞ այդ հասկանալ որպես մարքսիզմ-լենինիզմի էությանը տիրապետելը և այդ թեորիան կյանքում, իր հասարակական-քաղաքական և անձնական կյանքում որպես գործողության գեկավարություն կիրառելու կարողություն։ Երկրորդն ավելի ճիշտ, ավելի ուղիղ, ավելի կարևոր կլինի, նա հիմնականն է մարքսիզմ-լենինիզմի մեջ։ Եվ երբ ասում են «տիրապետել մարքսիզմ-լենինիզմին», ապա այդ նշանակում է սովորել այդ տեսնել դիմացիկայում։

Մարքսիզմ-լենինիզմը ավելի կամ պակաս չափով սերտել կարող է ամեն ոք, իսկ յուրացնել նրա էությունը և սովորել այն կիրառել՝ սա ավելի զժվար է։

Մենք գիտենք բազմաթիվ հին բանվորներ, որոնք մասնակցել են քաղաքական պայքարին։ Միթե նրանք մարքսիզմ-լենինիզմն ուսումնասիրել են այնքան, որքան դուք։ Զի՞ որ նրանք «Համկ(ր)Պ» պատմության համառոտ դասընթացը չեն ունեցել։ Շատ քիչ է նրանց վիճակին սիստեմատիկորեն ուսումնասիրել այդ թեորիան։ Թերեւս, մի տառ ռեռուցիոն գրքեր կարդացել են—և ընդամենը այդ։ Իսկ ահավասիկ իրենց պրակտիկայում նրանք բավականին ճիշտ են կիրառել մարքսիզմ-լենինիզմը։ Այդ թեորիայի դրույնը ներքո գնացել են և այժմ գնում են միլիոնավոր մարդիկ։ Եվ շատ բանվորներ ճիշտ են մոտեցել հասարակական երեւլույթներին, քաղաքական կյանքին, նրանք ճիշտ են ըմբռնել մարքսիստական-լենինյան գիծը՝ այս կամ այն հարցի լուծման ժամանակ։ Դրա պատճառն այն է, որ նրանք հասկացել են, ըմբռնել են մարքսիստական-լենինյան թեորիայի ռեռուցիոն էությունը։

Մարքսիզմ-լենինիզմը ուսումնասիրել հարկավոր է ո՛չ

սոսկ ուսումնասիրելու համար, ո՛չ ձեի համար։ Մարքսիզմ-լենինիզմը մենք ուսումնասիրում ենք ո՛չ թե նրա համար, որ այն իմանանք ձևականորեն, ինչպես առաջներում հավատի ուսումունք էին ուսումնասիրում։ Մարքսիզմ-լենինիզմը մենք դասումնասիրում ենք որպես մեթոդ, որպես գործիք, որի օգնությամբ մենք ճիշտ որոշում ենք մեր քաղաքական, հասարակական և անձնական վարքագիծը։ Մենք գտնում ենք, որ դա մարդու ամենահզոր գործիքն է իր գործնական կյանքում։

Այժմ մեր առջև հարց է ծառանում, թե ի՞նչպես սովորենք ավելի ճիշտ կիրառել մարքսիզմ-լենինիզմը պրակտիկ գործում։ Ամենից առաջ հարկավոր է, թեկուզ ընդհանուր գծերով, իմանալ մարքսիզմ-լենինիզմի թեորիական հիմունքները, թեկուզ ընդհանուր գծերով իմանալ կոմունիստական արարտիայի պատմությունը։ Պարտիայի պատմությունը ուսումնասիրելիս պետք է նայել, թե այս-ինչ և այս-ինչ հանդամանքներում ի՞նչպես են բոլշևիկները լուծել այս-ինչ գործնական հարցը։ Ինչո՞ւ նրանք այդ հարցն այսպես են լուծել և ոչ թե այլ կերպ, ինչի՞ց են նրանք ելել։ Ինչո՞ւ, օրինակ, մենք բոյկոտի ենթարկեցինք Բուլիդինյան Դուման, ինչի՞ց էինք մենք ենում։ Ի՞նչ պատճառով, հետո, քաղաքական ավելի պակաս նպաստավոր հանդամանքներում, մենք ընտրեցինք II, III և IV Պետական Դումայի համար։ Ինչո՞ւ։ Բոլոր այդպիսի հարցերի վերլուծման ժամանակ (իսկ այդպիսի հարցերը պատմության մեջ շատ են եղել, որովհետև պայքար շատ է եղել) դա ծառայում է ասես որպես օրինակ մարքսիզմ-լենինիզմի մեթոդի կիրառման, մյուս հարցերի լուծմանը ցույց տրվելիք մոտեցման՝ այլ, քաղաքական նոր իրադրության մեջ, ժամանակակից պայմաններում ծագող հարցերի լուծմանը ցույց տրվելիք մոտեցման։ Հասկանալի է, որ ընդսմին պետք է ուշադրության առնել տեղի ունեցած բոլոր փոփոխությունները, բոլոր նոր պայմանները։

Ուստի մարքսիզմ-լենինիզմն ուսումնասիրելիս ամենագլխավորն է—իրեն ստուգել այն հարցերի լուծմանը ցույց

տրվող մոտեցման գործում, որոնք այսօր, այս բոպելին հերթի են դրված կյանքի զանազան բնագավառներում։ Վերցնենք որևէ կենցաղային օրինակ։ Ահա ուսուցչուհին բաժանվեց ամուսնուց։ Մարքսիստական տեսակետից ի՞նչպես պիտք է լինի մարդկանց վարքագիծն այս դեպքում։ Ի՞նչպես վարվել։ Զէ՞ որ այդպիսի հարցի նկատմամբ էլ պիտք է ճիշտ մոտեցում դտնել, այն քննել ու լուծել մարքսիստորեն։ Ամենահասարակ մոտեցումը (և դա ավելի կամ պակաս չափով, —գոնե, ձևականորեն, —ճիշտ է) կլինի ասել։ Այդ մասնավոր գործ է, որը քաղաքականության հետ առնչություն չունի։ Սակայն, որչափով դա հայտնի է, աշակերտները դրա մասին խոսում են, գյուղում բամբասում են, ուսուցչուհու հեղինակությունը խախտվել է, —անհրաժեշտ է այդ փաստի խելացի բացատրությունը։

Տեսնո՞ւմ եք, թե ի՞նչպես երբեմն նույնիսկ զուտ կենցաղային հարցը կարող է դառնալ հասարակական-քաղաքական հարց։ Կյանքում յուրաքանչյուր օր տեղի են ունենում անվերջ քանակությամբ կենցաղային զանազան դեպքեր։ Ճիշտ լուծումը գտնել այդ դեպքերում և ճիշտ հասկանալ, թե ի՞նչպես վերաբերվել դրանց՝ մարքսիզմի տեսակետից, —ահա այստեղ է, որ մարքսիստն ստուգվում է։

Զէ՞ որ մարքսիզմ-լենինիզմը—դա այն բանալին է, որը հնարավորություն է տալիս լուծելու այս կամ այն հարցը։ Դա միայն հնարավորություն է տալիս և ոչ թե լուծում է, հնարավորություն է տալիս ավելի ճիշտ մոտենալու հարցի լուծմանը։ Սակայն դա պատրաստի ուեցեպտ չէ կյանքի բոլոր դեպքերի համար։ Առօրյա հարցերի լուծման, դրանց լուծման նկատմամբ ցույց տրվող մոտեցման գործում էլ զգացվում է, թե որն է իսկական բոլշևիկը և որը—տիրացուն, տառակերը։

Լինում են մարդիկ, որոնք իրոք տիրապետում են մարքսիզմ-լենինիզմին և կարողանում են այդ թեորիան կիրառել գործնական հարցերի լուծման ժամանակ։ Բայց լինում են մարդիկ, որոնք լեցուն են գիտական տեքստերով, ինչպես կարտոֆիլով պարկը, բայց գործնականորեն այդ գիտելիք-

Ները կիրառել չեն կարողանում: Այդպիսի մարդիկ ամեն ինչ կարող են անդիր պատմել, նաև դասախոսություն կարգան: Իսկ եթե նրան ասես, որ ձեր դպրոցում պատճել է այսպիսի մի կազուս—այս, օրինակ, հայրը ծեծել է իր որդուն, որը սովորում է այդ դպրոցում—և հարց տաս, թե հասարակական տեսակետից ի՞նչպես ճիշտ մոտենալ այդ կոնկրետ դեսլքին, ապա այդպիսի մարդիկ կշփոթվեն, երբեք ժամի արանքին կմոլորվեն: Իսկ եթե նրանք որևէ առաջարկություննեն էլ, ապա դա օպորտունիստական կլինի, դա չի համապատասխանի մարքսիզմ—լենինիզմի ոգուն, թեպետև նրանք բերեն մի կույտ ցիտատներ: Օպորտունիզմը միշտ մարքսիզմ—լենինիզմն ուղղակի ժխտելով չի արտահայտվում միայն: Երբեմն այդ երևան է գալիս տառակերության մեջ, այդ թեորիային դոգմատիկ վերաբերմունք ցույց տալու մեջ:

Ահավասիկ՝ գործնական հարցերը մարքսիզմ—լենինիզմի էության իսկական յուրացման հիման վրա լուծեն էլ հենց բոլորի դպրոցն է:

Տեքստի ուսումնասիրումը—այդ տեքստի ուսումնասիրումն է միայն: Եվ ինչպես որ դպրոցը երեխանների համար դեռ ամբողջ բուն կյանքը չէ, այլ միայն դպրոց է, այնպես էլ մարքսիզմ—լենինիզմի ուսումնասիրումը ուսումնական հաստատություններում, զանազան խմբակներում և սեմինարներում, նմանապես ինքնուրույն ուսումնասիրումը և այլն—այս ամենը միայն ուսումնասիրումն է: Մարդ այդ ուսումնասիրման դեպքում միայն գրքով է իմանում մարքսիզմ—լենինիզմը: Իսկ ահա երբ նա ընկլիմի քաղաքական կյանքի մեջ, հասարակական գործունեության մեջ, երբ նա կիրառի այդ մեթոդը, և կիրառի գիտակցորեն, այդ ժամանակ—ուրիշ բան է: Կյանքի հարցերի գործնական լուծման ժամանակ, այն հարցերի, որոնց առիթ է լինում հանդիպել ամեն օր, այդտեղ էլ հենց արտահայտվում է մարքսիզմ—լենինիզմը, այդտեղ էլ հենց ստացվում է մարքսիզմ—լենինիզմի գլխավոր դպրոցը, այդտեղ էլ հենց երևան է գալիս իսկական մարքսիստ—լենինյանը:

Գլխավոր դպրոցն այն չէ, որ սեմինարում զբաղվեցիր, կամ լեկցիա լսեցիր: Այդ միայն օժանդակ է:

Գլխավոր դպրոցն ստացվում է այն ժամանակ, երբ դուք վիճեք մարդկանց հետ, երբ խոսեք—զրուցեք ժողովը դի հետ, երբ որոշում ընդունեք ժողովը աշակերտի մասին: Իսկ ի՞նչ որոշում ընդունել երկո՞ր թե երեք դնել, վոնդե՞լ ուսումնական հաստատությունից թե, ընդհակառակը,—զիշողաբար վերաբերվել:

Ահա՝ այդպիսի հարցերի լուծման ժամանակ էլ հենց կլինի մարքսիզմ—լենինիզմի ամենագլխավոր դպրոցը:

Ինչպես որ ինժեներ-տեխնոլոգի համար՝ գործարանում աշխատելը նրա տեխնոլոգիական գիտելիքների գործնական կիրառումը և փորձի կուտակումն է հանդիսանում, ինչպես որ ուսուցչի համար՝ դպրոցում անմիջականորեն աշխատելը նրա մանկավարժական գիտելիքների գործնական կիրառումն է հանդիսանում, այնպես էլ մարքսիզմ—լենինիզմը կենդանի, օրդանական միասնությունն է թեորիայիր ու պրակտիկայի:

Եվ այսպես, դուք այժմ հասկացաք, թե ինչի մասին եմ խոսում ես ամբողջ ժամանակ: Ես ուզում եմ պարզ դարձնել այն միտքը, որ մարքսիզմ—լենինիզմին տիրապետելու համար բոլորովին բարվական չէ այդ թեորիայի ֆորմուլաներն ու եղբակացություններն անդիր ամենը, դրա համար բարվական չէ նաև նրա էությունը յուրացնելը: Մարքսիզմ—լենինիզմին իրոք տիրապետելու համար պետք է դեռ սովորել գործնական հարցերը լուծելիս օգտվել այդ թեորիայից, իսկ եթե ավելի առաջ գնանք,—ապա նաև կարողանալ այդ թեորիան Հարստացնել կուտակված փորձով, ընդհանրացնել փորձը, այսինքն՝ կարողանալ այն զարգացնել և առաջ մղել: Ահա սա էլ հենց ամենագլխավարն է:

«Համեկ(թ)Պ պատմության համառոտ դասընթացը» արտաքուստ գրված է շատ հանրամատչելի ձևով, սպիայն նաշատ մեծ աշխատանք է պահանջում ընթերցողից: Նրա մեջ տրված են մարքսիզմ—լենինիզմի բոլոր հիմունքներն ամենամեղմ ձևով: Կարգավիս հարկավոր է մտածել ամեն մի տողի վրա: Ոչ թե անդիր անել, այլ լավ մտածել խորամուխ վրա:

նել: Խոսքն այն մասին է, որ մարդ սովորի մարքսիզմ-լենինի-նիզմը գործնականում կիրառել, և այդ հարկավոր է սովորել: Իսկ ի՞նչպես սովորել:—Սովորել պատմական օրինակեներով, և այն էլ փոխադարձ շփման և կարծիքների փոխանակման միջոցով:

Ահա այսուղ ասացին, որ լավ կլիներ խմբակներ ունենալ: Ես լիովին հասկանում եմ այդ ձգտումը: Դա որոշ շափով ճիշտ է, որ խմբակը համենայն դեպս կարծիքների փոխանակման հնարավորություն է տալիս: Բայց ո՞վ ասաց ձեզ, թե այժմ դուք չեք կարող խմբակներ հավաքել: Ո՞րտեղից վերցրեք այդ: Կարդացե՛ք պարտիայի կենտրոնի 1938 թվի նոյեմբերի 14-ի որոշումը: Նրա մեջ դատապարտվում է խմբակը որպես մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրության հարկադիր սիստեմ, որը առաջ բարձրացվել-դարձվել էր որպես մեր կարերին բոլցելով սովորեցնելու հիմնական ձևը, և որպես քանակի հետեւց ընկնելու գործնական արտահայտություն՝ ի վիճակ պրոպագանդայի որակի: Այստեղ ընկերն ասաց, որ նրանց մոտ յոթ հոգի ուսուցիչներ ինքնուրույն պարապում են: Ո՞վ է ձեզ խանգարում ասել. «Մի շաբաթ հետո ես դեկուցում կանեմ այս-ինչ հարցի վերաբերյալ. ովքեր ուղղում են հավաքվել և քննարկել, թող. գան»: Մի՞թե որևէ մեկը խանդարում է:

Կյանքի ամեն մի երեսութին պետք է մոտենաս կոնկրետ կերպով, եթե դու մարքսիստ ես: Եվ, հասկանալի է, իրարժիք այդպես քննարկելու դեպքում կարելի է ավելի լավ ըմբռնել հարցը: Երբ դուք կարդացել եք, դուք միայն մի կողմն եք վերցրել, երեք կողմն եք վերցրել, իսկ չորրորդը չեք վերցրել: Վերջապես, վերցրել եք բոլոր չորս կողմերը: Մինչդեռ պարզվեց, որ այդ ոչ թե քառակորսի է, այլ խորանարդ է, որն ունի վեց կողմ: Այսպես որ ուրիշների հետ քննարկելիս միաքը հղկվում է և հարստանում:

Դուք ասում եք, որ գիտկուսիաներ են հարկավոր: Սակայն ո՞վ է խանդարում ձեզ: Ուզեք, կհավաքվեք հինգ-տաս հոգի: Զէ՞ որ հինգ հոգին կարող են հիմնավորապես վիճարանակել իրար հետ: Ո՞վ է ձեզ խանդարում; Իսկ եթե դուք

դեռ զեկուցումներ էլ դրեք, ապա ես պետք է ուղղակի առևմ,—հինգ անդամ ավելի ուսումնասիրած կլինեք հարցը, քանի թե դուք լեկցիա լսեք: Զէ՞ որ զեկուցում դրելու համար հարկավոր է յուրաքանչյուր բառը, յուրաքանչյուր միտքը լավ մտածել: Զեկուցում դրելու համար հարկավոր է և' այնտեղ նայել աղբյուրը և' այստեղ նայել: Զեկուցում գրելիս, ինչ խոսք, ավելի շատ կմշակեք հարցերը, քանի թե միայն լեկցիա լսեք: Լեկցիաներին՝ յուրացնելը շատ բանից է կախված—նայած ինչպիսի դասախոս է և ինչպիսի տրամադրություն ունեք դուք: Գուցե, լեկցիայի ժամանակ մի-քիչ խոսեցիք հարեւանիդ հետ: Դուք ինքներդ՝ գիտեք, որ լեկցիայի մեջ հաճախ երեք քառորդը ջուր է, իսկ մեկ քառորդը—շահնեկան տեղեկություններ: (Ծիծառ): Մենք, դըժ-բախտաբար, չենք կարողանում, ինչպես հարկն է, ջուրը մզել: Ճիշտ է, այն հարկավոր է մզել: Բայց այնուամենայնին լիովին չես կարող մզել այն: Զեկածեք, թե ես դեմ եմ լեկցիաներին: Ինքնըստինքյան հասկանալի է, որ լեկցիաներն ուսուցման շատ կարենու տեսակն են: Ես միայն ձեզ մզում եմ ինքնուրույն աշխատանքի, իսկ այդ այստանքն քեզ կստուդի հաճախել լեկցիաները և ուշաբջությամբ լսել դրանք:

Ի՞նչպես վերաբերյալ խմբակային աշխատանքին: Գիտեք ինչ, խմբակը ինչ-որ սահմանափակվածության նըրբերանգ ունի: Բուն «խմբակ» անունը սահմանափակվածության նշան է: Արդյոք, դրանով իսկ վերացվո՞ւմ է կոլեկտիվ քննարկումը: Ո՞չ, չի վերացվում և չի արտապնդում: Կոլեկտիվը քննարկումը պետք է զուգորդվի ինքնուրույն ուսումնասիրության հետ, որը հիմնական մեթոդ է հանդիսանում: Տանը պատրաստվի՞ր, խմբակում, ժողովում գեկուցում արա՛, իսկ զեկուցման շուրջը վիճարանություններ ծալալիք: Ո՞չ թե արհեստական վիճարանություններ ծավալիք, այլ այնպես արա՛, որ ամեն մեկն իր իսկական կարծիքն արտահայտի դրված հարցի վերաբերյալ, որ չվախենան ասել այն, ինչ որ մտածում են: Եթե այդ զեկուցման մեջ լինի գեթ մի կաթիլ սեփական

Վարծիք, ես չեմ կասկածում, որ ձեզ մոտ տաք վիճաբանություններ կլինեն: Այդ վիճաբանությունները, թեկուղ Պուշկինի մասին, մարքսիզմ-լենինիզմի հիմանալի դասը կլինեն:

Երբ խոսում են մարքսիզմ-լենինիզմի ուսումնասիրության մասին, ապա հաճախ մտածում են, թե իբր միմիայն մարքսիստական գրքեր պետք է կարդալ—Մարքս, Էնդելս, Լենին, Ստալին կարդալ: Իրոք—ոչ միայն նրանք: Սակայն խնդիրն այն է, որ ամեն մի գիրք մարդ կարդա մարքսիստորեն, լենինարար, ստալինարար: Ասենք, կարդում են Չերնիշևսկին, սա կարելի է զանազան կերպ կարդալ: Վաթուունական-յոթանասնական թվականների առաջակալոր ընթերցողը նրան կարդում էր իր ձեռով, այն ժամանակականների միբերալ ընթերցողը նրան կարդում էր իր ձեռով, իսկ մենք, որպես մարքսիստներ-լենինյաններ, նրան կարդում ենք մեր ձեռով: Մեր ըմբռնումն այլ կլինի: Երբ զեկուցում ես անում Չերնիշևսկու աշխատանքի մասին, երբ վերլուծում ես Չերնիշևսկուն, երբ ծավալպում են վիճաբանությունները և մտքերի փոխադարձ զղկումը, այն ժամանակ ավելի լավ կյուրացնես մարքսիզմ-լենինիզմը:

Վիճաբանությունների ժամանակ պետք է իունել իր քառերով, իր լեզվով: Դուք պետք է ունենաք ձեր լեզուն, ես այդ գիտեմ: Հարկավոր է, որ մարդիկ վիճաբանեն, սակայն ոչ թե արհեստականորեն, այլ ըստ էության, այսինքն այնպես, որ գործը հասնի եթե ոչ «սոուրուզմփոցի», ապա գելթ լուրջ, տաք բանակուլի: Ահա թե ինչպես պետք է դնել Հարցը: Այն ժամանակ մարդիկ կհաճախեն խմբակները և կզբաղվեն: Մարքսիզմ-լենինիզմի գիտելությունն ամենից լավ ձեռք է բերվում ուսումնասիրման հենց այս մեթոդի միջոցով:

Ես կարծում եմ, որ տեքստը դուք ինձանից ավելի լավ գիտեք, ես համոզված եմ դրանում: Եթե ես սկսեի ձեզ հետ միասին քննություն տալ, ապա ես կտապալմեի տեքստի գծով, անպայման կտապալմեի: Իսկ մարքսիստորեն մոտենալ Հարցին, ես կարծում եմ, անշուշտ ավելի

ճիշտ կկարողանամ, քան դուք, ավելի շուտ կգտնեմ մոտեցումի դիմը, որովհետև երկարատև փորձը, պրակտիկան, հարստացված թեորիական վեճերով,—այս բոլորը սրել են իմ զգացումները: Ես զգում եմ կեղծությունը (Փալյան), եղր սխալ ձևակերպումն է տրվում: Այդպիսով ինձ մոտ երևան է եկել նոր զգացում, որը մշակվել է թեորիական վեճերում և բանակույներում, որն ինձ ընտելացրել է ուշադիր լինելու: Ուստի քննարկումից չպետք է վախենալ, այլ պիտք է մարդկանց ընտելացնել դրան: Միայն այդ եղանակով կհղկվեն ձեր միտքն ու ձեր լեզուն: Երբ դուք իմանաք, որ ամեն մի սխալ եզրակացության վերաբերյալ ձեր ամեն մի սխալ ձևակերպության վերաբերյալ ձեր դեմ վիճաբանելու մեջ, դուք կսկսեք ավելի ուշադիր կերպով վհանուել ավելի ճիշտ լուծումներ:

Ուստի, եթե դուք ուզում եք հասկանալ մարքսիզմ-լենինիզմը և տիրապետել այդ թեորիային, ապա ուրեմն ինքնուրույն սրաբապմունքների վրա հիմնված զեկուցումները, ոեֆերատները և վիճաբանությունները հսկայական օգուտ կտան ձեզ: Ինքնուրույն ուսումնասիրումը մարքսիզմ-լենինիզմին տիրապետելու հիմնական մեթոդն է:

## II. ՈՒՍՈՒՑՉԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆ Է ՆՄԻ ՄԱՐԴՈՒՄ-ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՄԸ

Գուցե երեկ այստեղ ասվել է, իսկ այսօր ահա ոչ ոք չասաց, թե ի՞նչպես են ձեզ մոտ երեխաները, ի՞նչպես է գնում աշխատանքը նրանց հետ, ի՞նչպես են հարաբերությունները երեխաների հետ: Այստեղ մի ընկեր հարեւանցիութեն ասաց. «Սահմանված է հերթապահություն բանվորական հանրակացարաններում: Հերթապահները հետևում են, որպեսզի երեխաների վարչը չատ չխանդարի կարգը»: Այս, այդպես է: (Տեղից—Այս':)

Միթե դուք ուզում եք, որ երեխան լինի միջակ քաղքենի, 45 տարեկան մարդ՝ քիչ ինանդարված ստամբօքով

(ծիծաղ)։ Կամ թե ուզում եք, որ երեխան լինի ձեր—չա-  
փահաս մարկանց—ճիշտ նմանությունը։ Զէ՞ որ երեխանեւ-  
ը խիստ շատ նախաձեռնություն ունեն։ Եթե ես ուսուցիչ  
լինեի և եթե երեխաները որևէ տեղ թեկուղ չարածճիու-  
թյուն անեին, սակայն այնպէս, որ այդ ժամանակ քաջու-  
թյուն երևար, ապա ես այդ քաջությունը մի տեսակ  
կիրակուսեի, իսկ բուն չարածճիության համար մի քիչ  
կնախատեի նրանց և գրանով կսահմանախակվեի։ Ան-  
շուշտ, պետք է տարբերել չարածճիություն էլ կա, չարա-  
ծճիություն էլ։

Եթե ինձ հարց տային, թե ամենադլխամավորը ի՞նչ է  
պահանջվում ներկա մօմենտում ուսուցչից, ապա ես կա-  
սեի—աճեցնել նոր մարդուն։ (Մենք այդ հաճախ ենք  
ասում, և դրանով ես ոչինչ նոր բան չեմ ասում)։ Մեզ  
մոտ ստեղծվում է սոցիալիստական հասարակության նոր  
մարդը։ Այդ նոր մարդուն պետք է պատվաստել մարդկա-  
յին ամենալավ հատկություններ։ Զէ՞ որ նոր, սոցիալիս-  
տական մարդը ես, նա չի լինի այնպիսի մարդ, որի մոտ  
բացակայում են մարդկային զգացմունքները։ Մարդը մարդ  
է։ Մարնից պետք է ենել։

Իսկ մարդկային ի՞նչպիսի զգացմունքներ պետք է  
պատվաստել։—Նախ և առաջ, սեր, սեր դեպի իր ժողո-  
վուրդը, սեր դեպի աշխատավոր մասսաները։ Մարդ պետք  
է սիրի մարդկանց։ Եթե նա սիրի մարդկանց, ապա ուրեմն  
նա ավելի լավ կապի, ավելի ուրախ կլինի նրա կյանքը,  
որովհետեւ ոչ ոք այնպես վատ չի ապրում աշխարհում,  
ինչպես միզանտրոպը—մարդատյացը։ Նա ինքը բոլորից  
վատ է ապրում։

Երկրորդ,—ազնվություն։ Երեխաներին սովորեցնել աղ-  
նըլություն։ Ուսուցիչը սրան պետք է, ըստիս, հասնի հե-  
տեղականորեն՝ մանկավարժական բոլոր եղանակներով,  
ինչպիսիք միայն հնարավոր են։ Չստել, չխարել, այլ իրեն  
ազնիվ պահել։

Երրորդ,—քաջություն։ Սոցիալիստական մարդը—աշ-  
խատանքի մարդը—նա ուզում է նույնել աշխարհը, և ոչ

միայն երկրագնուի վրա գոյություն ունեցող աշխարհը,  
այլև տիեզերքը տեղից չարժել մարդու բանականության  
միջոցով։

Չորրորդ,—ընկերական գոյում։ Հարկավոր է, որ ըն-  
կերական դողում (Շպայք) լինի։ Դա հարկավոր է թեկուղ  
այն պատճառուով, որ մենք գտնվում ենք կապիտալիստական  
շրջապատման մեջ, որովհետեւ մեր Միությունը սիստեմա-  
տիկ կերպով հալածանքի է ենթարկվում և յուրաքանչյուր  
բուրժուատ անձկանոք սպասում է հարմար մոմենտի, որ-  
պեսզի ճզմի Սովետական Միությունը։ Իհարկե, նրանք չեն  
տեսնի այլպիսի մոմենտ, սակայն այս նշանակում է, որ  
Սովետական Միությունը միայն պողպատե պարսպով կա-  
րող է պաշտպանվել։ ՍՍՌՄ-ն է՛լ ամելի ուժեղ կլինի, եթե  
սովետական մարդկանց մեջ ընկերական զողում զաստիա-  
րակիլի՛ փոքր հասակից, —իսկական, ամուր ընկերական զո-  
ղում՝ զպրոցական հասակից։ Այն ժամանակ, եթե մարդ  
կարմիր Բանակը կամ ընկնի ռազմաճակատ, նրա հա-  
մար ամելի հեշտ կլինի մարտական զողման մեջ մտնել։ Նա  
կը արդեն սիրով զողմած՝ գեղի սոցիալիստական հայրե-  
նիքը։

Հինգերորդ,—դա այն է, որ պետք է սիրել աշխատան-  
քը, ոչ միայն սիրել, այլև ազնվորեն վերաբերվել գեպի  
աշխատանքը, ընդամեն հաստատապես հիշելով, որ երե-  
մարդ ապրում, սիրում է և չի աշխատում, ապա այդ նշա-  
նակում է, որ նա ուրիշի աշխատանքն է ուտում։ Առանձին  
կարիք չկա այդ ձեր առջեւ զարգացնելու։ Այդ՝ աշակերտ-  
ների առջև պետք է զարգացնել։ Աշխատանքի մասին պետք  
է առանձնապես հարց բարձրացնել։ Մենք հաճախ ասում  
ենք. «Աշխատանքը պատվիի գործ է»։ Առաջնորդը առաջ է  
մոել «աշխատանքը պատվիի գործ է» լոգունդը, և եթե դուք  
միայն կրկնեք, որ «աշխատանքը պատվիի գործ է», ապա  
այդ քիչ կլինի։

Այդ չէ առաջնորդի կամքի, պարտիայի և ժողովրդի  
կամքի կատարում։ Հարկավոր է, որպեսզի երեխաները  
կոնկրետ տեսնեն, որ իրոք աշխատանքը պատվիի գործ է։

Երեխային չես կարող խաբել: Եթե մի փոքր կեղծություն լինի, ապա նա արդեն չի հավատու:

Կարելի է շարունակել նոր մարդու հատկությունների թվարկումը, բայց ես կսահմանափակվեմ միայն սրանցով: Այդ մարդու սահմանը լինի առաջնային նույնագիտություններն են: Սակայն նույնագիտությունը են պահանջները նաև յուրաքանչյուր ազնիվ ողջամիտ մարդու նկատմամբ: Մեր թեորիայի արժեքը հենց նրանումն է, որ նա պահանջում է այն, ինչ որ պահանջվում է աղնիվ, ողջամիտ մարդու համար:

Կարգապահությունն ինքնըստինքյան—դա բղխում է այն հատկություններից, որոնց մասին ես ասացի վերևում: Երեխաները սիրում են կոտրատել, ծռմռել: Մենք ինքներա էլ այդպես ենք եղել: Սողոսկել ուրիշի պարտեզը—այդ բավականություն էր. գողացած խնճորն ավելի քաղցր էր թվում, քան իր սեփականը, կամ գնածը: Բայց համեմայն դեպս պետք է ասել, որ մարդիկ պահեն, պահպանեն արժույթը: Պետք է ո՛չ միայն կոտրել, այլ և ստեղծել— այդ է հնությունը: Մենք ո՛չ միայն քանդում ենք հինը, մենք նորը կառուցողներ ենք հանդիսանում:

Ես կարծում եմ, որ իրոք ուսուցիչ լինելու համար մարդ պետք է ուսուցիչ ծնվի, այլ ոչ թե միայն դառնա ուսուցիչ: Ուսուցիչ աշխատանքում շատ դժվարություններ կան և մեծ է ուսուցիչ պատասխանաւությունը: Անշուշտ, համապատասխան դիսցիլինայի դասավանդումը—դա հիմնական աշխատանքն է, բայց բոլորից բացի, ուսուցչին ընդօրինակում են աշակերտները: Ահա թե ինչո՞ւ ուսուցչի աշխարհայացքը, նրա վարքը, նրա կյանքը, նրա մոտեցումը յուրաքանչյուր երևույթին՝ այսպես կամ այնպես ազդում են բոլոր աշակերտների վրա: Եվ այդ հաճախ աննկատելի կերպով:

Սակայն այդ քիչ է: Կարելի է համարձակ ասել, որ եթե ուսուցիչը շատ հեղինակավոր է, ապա որոշ մարդկանց վրա ամբողջ կյանքում մնում են այդ ուսուցչի աղդեցության հետքերը: Ահա թե ինչու նաև կարենը է, որ ուսուցիչը հետեւ իրեն, որ նա զգա, թե իր վարքը, իր

գործողություններն ամենաուժեղ վերահսկողության տակ են գտնվում, որպիսի վերահսկողության տակ չի գտնվում աշխարհում ոչ մի մարդ: Տասնյակ մանկական աշքեր նայում են նրան և մարդու հոգեկան կյանքի զանազան նյուանների նկատմամբ ոչինչ ավելի ուշադիր, ավելի սրատես, ավելի զգացունակ բան չկա, ոչ ոք այնպես չի որսարությունները, ինչպես մանկական աչքը: Այս պետք է հիշել:

Միայն ես վախենում եմ՝ ձեզ այն մտքին չբերեմ, թե դուք պետք է անբնական պահեք ձեզ: Այդ նույնպես լավ չէ, այդ միանգամայն սխալ կլիներ: Ուսուցչին անհրաժշտա է բնականություն և ազնվություն բոլոր հարցերի լուծման ասպարեզում, առանձնապես զանազան մանկական գործերի լուծման ասպարեզում, պատիժների հարցում և այլն: Ենթադրենք տղան կոտրեց ապակին կամ վիրավորեց առջկան, կամ աղջիկը—տղային: Այստեղ պետք է ենել ոչ թե միայն բուն փաստից, որպես այդպիսուց, այլ պետք է հաշվի առնել, թե ինչպես կազդի մանկական հոգեբանության վրա այդ հարցի այս կամ այն լուծումը: Այդ հարկավոր է անպայման: Համեմայն դեպս երեխաներն ունեն իրենց «իրավաբանական կողմերը»: Ենթադրենք, որ երեխաները կուլեցին, մեկի քիթը կոտրեցին, իսկ հետո այդ տուժածը գնաց և զրաբարտություն ացեց: Մինչև իսկ չեղոք երեխան էլ նրան դրա համար կդատապարտի և կասի: «Ե՞ր դու մատնիչ կուլել ես ուզում, իսկ հետո էլ գնում ես գանգատում»:

Գլխավորն է—լինել ազնիվ՝ երեխաների եետ, եետել իրեն, մեր երեխաներից դաստիարակել իրոք լավ, իրոք սոցիալիստական ֆաղաքացիներ—ազնիվ, քաջ, զարգացած ընկերական զգացմունք ունեցող, մանկական հոգեբանության և մանկական հնարավորությունների սահմաններում կարգապահության վարժված սոցիալիստական ֆաղաքացիներ:

Եվ վերջապես, ընկերնե՛ր, հարկավոր է, որ երեխաների մեջ երկար տարիների ընթացքում մնան վառ տպա-

վորություններ, լավագույն ապավորություններ և հիշողություններ դպրոցի մասին։ Եթե դուք հասնեք այն բանին, որ ձեր աշակերտներն իրենց ամրող կյանքում պահպանեն հիշողություններ ուսման տարիների մասին, որպես հիանալի տարիների, —այդ արդեն լավ նշան է։

Ահա, ըստիս, այն գլխավորը, որ պահանջվում է ուսուցչից։

III. ԻՐ ԳԻՒԾԵԼԻՔԻՑՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄԱՍՍՍԱՆԵՐԻ  
ՄԵԶ ՏԱՆԵԼԸ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՆ ԱՄԵՆ ՕՐ  
ՄԱՍՆԱԿՑԵԼԸ ԱՄԵՆ ՄԻ ՈՒՍՈՒՑՉԻ ՊԱՐՏԱԿԱՆ-  
ՆՈՒԹՅՈՒՆՆ Է

Այժմ կանոն կառնեմ հասարակական կյանքի հարցերի վրա։ Այսեղ կարեռ է, որ ուսուցիչը սերտ մոռենա մարդկանց, իրականությանը,՝ սովորի հասկանալ նաև տեղական իրադրությունը։ Հասկանալի է, իդեալական կլիներ, եթե մեր բոլոր ուսուցիչները և ինտելեկտների մեր մյուս կառելը լիովին տիրապետեին մարքսիզմ-լենինիզմին։ Սակայն վատ չի լինի, եթե նրանք իմանան նույնիսկ թեկուզ այդ թեորիայի ընդհանուր հիմունքները։ Այդ արդեն վատ չէ—թե՛ կոմունիստի, թե՛ անպարտիականի համար։ Ես երաշխավորում եմ, որ որոշ անպարտիականներ մարքսիզմ-լենինիզմը ավելի լավ գիտեն, քան ավարտիականները։ Ճիշտ է, նրանց թիվը փոքր է։ Այսեղ հարկավոր է սովորել՝ մարքսիստորեն մոռենալ տեղական կյանքի երեսյթներին, ճիշտ վերլուծել դրանք։ Մինչդեռ այն գեկուցումներում, որ դուք անում եք բնակչության առջև ու որոնց մասին դուք այսեղ պատմեցիք, բոլորովին բացակայում է տեղական կյանքը։ Ահա որքան մարդ էլ այստեղ հանդես եկավ, ո՛չ մեկը չասաց, թե ինքն առիթ է ունեցել զեկուցումով հանդես դալու տեղական երեսյթի մասին։ Զե՞ որ մարդիկ ծնուռմ, մեռնում են, ամուսնանում, հարսանիք են կատարում։ Բազմաթիվ հասարակական երեսյթներ կան… Մի՞թե այդ մասին ոչինչ չկա ասելու կամ չի կարելի ասել։ Մի՞թե առիթները քիչ կան։

Կոլխոզային շինարարություն, անտեսության դարպացում, —այս ամենը զարթեցնում է կոլխոզների միաքը, կապում է դա հասարակական լայն խնդիրների հետ։ Զեկուցումների համար միանդամայն հետաքրքրական նյութ՝ որքան ուղեկան է։

Կոլխոսեառությունները զատում են աչքի ընկնող գործիչներին, և այդպիսի մարդկանց մասին զեկուցումները, —և այն էլ եղակացություններով հանդիրձ, նրանց դրական ու բացասական կողմերի ցուցադրումով հանդերձ, —անոտարակույս, առք վիճաբանություններ առաջ կը բերի։ Այդպիսի գեկուցումներն առողջ քննարկման հնֆարիելու դեպքում աճում է կոլխոզների հասարակական գեմքը, մեծանում է հարգանքը կոլխոզային աշխատանքի վերաբերմաբ։

Կողքի կոլխոզում բերքը եղել է 10—12—15 ցենտներ՝ յուրաքանչյուր հեկտարից, իսկ ձեր կոլխոզում—5—6 ցենտներ։ Խեցո՞ւ ձեզ մոտ թույլ բերք է եղել։ Ահա ձեզ եւ թիմա զեկուցման համար։

Մի խոսքով, երբ դուք մանում եք գյուղացիական կյանքի մեջ, երբ ուզում եք աշխատել բնակչության հետ, ապա համեմատյն ունենալու արեք, որ դա անմիջական սերտ շվիմում ունենա կյանքի հետ, որ դիպչի, որ զեկուցումը շոշափի մարդկանց։ Այն ժամանակ, անոպայման, ժողովուրդը կինա ձեր զեկուցումները լսելու։ Պնդնին հասկանալի է, որ մեր երկրի և առօղջ աշխարհի կյանքում անեցող հասարակական և քաղաքական զեկուցերը միշտ շահեցից ամելի նյութ են տալիս։

Ճերջապես, հարկավոր է, որ զեկուցումներն ապատ քննարկվեն և որ մարդիկ ամելի հանդուրժողաբար վերաբերին ելույթների ձեին։ Գլխավորն այն է, որ հասկացվի զեկուցման գլուխական միտքը և որ սրա մասին վիճաբանություններն մասնակցողներն իրենց կարծիքն արտահայտեն, չնելիք շարադրանքի ձեից, լսվ հիշելով, որ խոսքի ձեւը ձեռքբերովիք բան է։ Կարեռ է, որ միտքն իրենը լինի։

Ուսուցչի հասարակական կյանքում անհրաժեշտ է, որ պամենուրեք, որտեղ նա կարող է, որտեղ նրա կարծիքը հարցնում են, որ նա իր ձայնը տա ազնվորեն։ Հարկավոր է, որ գյուղացիները հարգանք ունենան դեպի ուսուցիչը, ոչ միայն որպես դեպի ուսուցիչ, այլև որպես դեպի մարդ։ Նկատի ունեցեք, որ սա քաղաքական հարց է։ Սա խորապես քաղաքական հարց է։ Եթե ուզում եք, որ ուսուցչությունն իրեն համապատասխան դիրք գրավի, ապա ուրեմն այնպիսի գիծ տարեք, որ ուսուցիչը լինի անկողմնակալ, չվախենա իր տեսակետն արտահայտել այս կամ այն հարցի վերաբերյալ։ Գյուղացիական հարցերը լուծելիս, հասկանալի է, ուսուցիչը կարող է օդնել, որչափով նա տվյալ վայրի քաղաքացին է, որչափով նա մասնակցում է տվյալ վայրի տնտեսական և քաղաքական կյանքին։

Իսկ գլխավորապես ուսուցիչը կարող է գյուղացուն օգնել կուլտուրական ասպարեզում։

Կուլտուրայի հասկացողությունը շատ լայն է—սկսած երես լվանալուց մինչև մարդկային մտքի բարձունքները։ Եվ երեակայեցե՛ք, այստեղ ավելի հեշտ է, քան որևէ այլ տեղ, սայթաքել-ընկնել քաղքենիության մեջ։ Զեռքերի մաքրությունը, հագուստի մաքրությունը, բնակարանի անհրաժեշտ կոմֆորտը և այլն—այս ամենը բնակչության կուլտուրականության նշաններ են։ Հասարակական ժողովները, դրամատիկական խմբակները, սպարի երեկոները և այլն—հասարակական կուլտուրայի նշաններ են։ Կոմունիստները դրանց մասնակցում են, դրանք իրավացիորեն համարելով կուլտուրական զարգացման գործոններ։ Սակայն այդ բոլորը կարող է վերածվել նաև քաղքենիական ժամանցի։

Եվ ահա, քաղքենիության ու խսկական կուլտուրական դարդացման միջև անջրպետը տեսնելու համար պահանջվում է զգալի կուլտուրականություն և քաղաքական զգացողություն։ Մարքսիստն այդ նվաճումների վրա նայում է, որպես առաջ շարժվելու միջոցի, նոր աստիճանի։ Իսկ քաղքենու համար դա ինքնանպատակ է, նա ձգտում է իր նվա-

ճումը կայունացնելու, նա դառնում է տվյալ իրադրության ստրուկը, ամրապնդելով նաև համապատասխան բարոյախոսություն, քննցնելով միտքը։ Դրա դեմ պետք է պայքարել։

Ուստի ցանկալի է, որ դուք կուլտուրական աշխատանք կատարելիս նրա մեջ հասարակական-պետական տարրեր մտցնեք, քաղաքականություն մտցնեք, այլապես ձեր կուլտուրան կողմնորոշումը կկորցնի և կընդունի այսպես կոչված «գավառական կուլտուրայի» բնույթ, կկորցնի կապը համապետական կուլտուրայի հետ, համապետական կուլտուրական պահանջմունքների հետ։

Կուլտուրական այն գործը, որ դուք վարում եք, պետք է կապել ընդհանուր-սոցիալիստական շինարարության հետ, որպեսզի մարդ մեկուսացած չմտածի։ Քաղքենինդա կցկուուր, անջատորեն մտածող մարդն է, որն իրեն չի կապում ոչ մի բանի հետ և ոչ ոքի հետ։

Այս աշխատանքը շատ դժվար է։ Այս շատ դժվար է նրբին աշխատանք է այն տեսակետից, որ մարդ ինքը պետք է կուլտուրական լինի։ Այստեղ միևնույն բանն է, ինչպես երածշտության մեջ։ Երաժիշտը կեղծ նոտան կրոնի օրկեստրում, իսկ ինձ համար մի ամրող կեղծ գամմա ամներ-կատելի կլինի, որովհետև ես երաժշտությունից չեմ հասկանում։ Երբ կեղծ նոտան ես զգում, հարկավոր է ուղղել այն։

#### IV. ՈՒՍՈՒՑԻՉՆ ԻՐ ԽՈՍՔԻ ՄԵՋ ԿԵՆԴՐԱՆԻ ՀՈԳԻ ԵՎ ՄԻՏՔ ՊԵՏՔ Է ԴՆԻ

Ընկերնե՛ր, ես չգիտեմ՝ ինչպես անցավ երեկ ձեր նիստը։ Բայց ահա այսօր չի նկատվում ձեզ մոտ մտերի վոխատանքի մասին, ոմանք գունազարդում են այն։ Միթե նրա համար եք դուք այստեղ հավաքվել, որ յուրաքանչյուրը ավելի կամ պակաս սովորական հաշվետվություն տաք։ Իսկ հատկապես այնպես է ստացվում, որ մի դպրո-

ցը նման է մյուսին և մարդիկ նույնակես նման են մեկը մյուսին: Իսկ ես կարծում չեմ, որ զուք այսուեղ հավաքվել եք «կովելու» համար:

Ինչու համար զուք, երբ պատմում եք, ձգտում եք պատրաստի Փորմուլաներով խոսել: Զէ՞ որ զուք ուսուցիչներ եք, գուք ուսուերեն ինդուն զիտեք: Իսկ դիտե՞ք, թե ինչ է նշանակում պատրաստի Փրազներով խոսել: Այդ նշանակում է, որ ձեր միտքը չի աշխատում, այլ միայն ինդուն է աշխատում: Պատրաստի Փրազով դուք մարդկանց վրա ապավորություն շեք զործի: Տպավորություն չեք զործի այն պատճառով, որ պատրաստի Փրազն առանց ձեզ էլ զիտեն: Դուք վախենում եք, որ եթե ձեր ձեռով տեսք, այդ այնքան դեղեցիկ չի լինի: Սիսալում եք: Ավելի լավ կլնեն այն, ավելի հասկանալի կլինի այն:

Չեզ մոտ իրակրտ կյանքում—մէնձ կապ կա դյուզացիության հետ, բնակչության հետ: Բայց երբ պատմում եք այդ կյանքի մասին, ապա այդ կապը կարծես ինչ-որ «տեխնիկական» կապի տպավորություն է թաղնում: Այս ժողովներ գումարեցինք, այսքան զրուցյներ անցկացրինք: Կարծես մե դուք կյանքի մասին չեք խոսում, այլ գյուղացիության և ուսուցչության միջև տեղի ունեցող հարաբերությունների «տեխնիկայի» մասին եք խոսում: Զէ՞ որ զուք մարդկանց հետ հանդիպում եք ոչ միայն ժողովներում և զրուցյների ժամանակ: Հարկավոր է խոսել բնակչության հետ ունեցած ձեր հարաբերությունների բովանդակության մասին:

Այդ հարաբերություններն ունեն և՛ քաղաքական, և՛ հոգեբանական, և՛ այլ կողմեր, որոնք երեան են գալիս մարդկային նորմալ կյանքում: Բայց ձեր շարադրանքի մեջ չկա այդ սերտ, օրգանական կապը: Գուցե ես շատ եմ ծերացել ու այդ պատճառով չեմ կարողանում որսալ այն: Բայց ես ոչ մի ծպառն չլսեցի, թե ինչն է ձեղանում դը-գարությունը, որտեղ և ինչն է ձեզ սեղմում: Դուք պատրաստի Փրազներ եք կրկնում միայն: Դա ֆորմալ է դարձնում խոսքը: Յուրաքանչյուր ոքում առաջանակ է առաջանակում ների գլուխությունը կենդանի մարզը զկում է սովորաբար իր, հասարակ լեզվով, առանց պատրաստի ձևակերպումների գլուխությունը:

Եփլով, այն լեզվով, որ մայրն է ավել նրան: Ամենալավ լեզուն—մայրական լեզուն է, հավատացե՞ք իմ խղճին: Մենք առաջ ենք—ուսուցիչ, ուսուցիչ, միծ զործ է ուսուցիչ լինելը: Են այդ ձեշտ է: Մարդայն լո՞չ դուրս կը առ եթե, եթե ուսուցիչն սկսի միայն պատրաստի Փորմուլաներ հրատենել մարդկանց:

Ահապատիկ դուք, խոսած ընկերներից վերջինը, աշխատում եք զյուղում, կարծես թե զոհ եք ձեր զորությունից, գուք բանն այնպես նկարագրեցիք, որ շատ լավ եք ապրում այժմ: Բայց ահա, ինձ թվում է, եթե կարգան ձեր ձառների պայտը թյունները, առաջ մարդիկ շիշ կհար-վատան նրան, ինչ որ զուք առել եք: Եվ ո՛չ այն պատճառով: Ասածին, կասոն, որ ընկերը մի քիչ իրեն պայում է: Երեսում է, ևս արտինչ ու այս-ինչ բանն եմ արել: Հենց որ մարդիկ զգանք որ որենի մեջին իրեն չինչ գովայնանում է և առաջ քա-շում, խիստյան ուշաղրությունները լարրում են: Ես ձեղ ուղղակի կրամում—դուք զեղեցիկ խոռոչը շատ ասացիք, իսկ հոգի չըպացիք: Չեր խոսքերի մեջ հոգի չըպացիք: Սրա-նով ևս առհետեւն չեմ ուզում առել, թե դուք հոգի չունեք: Ամեննին ոչ: Ես միայն ուզում եմ առել ահա թե ինչ—այն ներքին վիճակինը, որ ձևում գոյություն ունի, զուք ձըդ-տում եք արտահայտել զնայուն Փորմուլաներով: Իսկ ներքին զգացմանները կենդանի մարզը զկում է սովորաբար իր, հասարակ լեզվով, առանց պատրաստի ձևակերպում-ների գլուխությունը: Ուստի, երբ զրագիւմ մարզը կարգան ձեր պայտը թյունները, ապա նաև կմտածի—արհեստականությունն էս: Արհեստականություն: Զկա բնական ներքին վիճակ: Շատ խոսքեր, ջերմ խոսքեր, որոնք վկայում են այն մասին, որ բավարարված եք աշխատանքով, հրապուրվում եք այդ աշխատանքով, իսկ խոսքերը համոզիչ չեն, որովհետեւ դրանք սեփական մշակման արդասիք չեն, այլ պատրաստի են վերցրած: Հասկացա՞ք: Ասացեք, ստորև եմ ես, թե ոչ: Այսը ձեզ մոտ արհեստական է դուրս դալիս: (Տեղ-դից—ձեշտ է):

Ահա երևակայեցե՛ք, որ այդպիսի շարադրանքով, այդպիսի գեկուցումով ժողովը է առնելու դուրս գաք և խոսեք: Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կստացվի: Զեզ կլսեն ու կգնան, մինչև խոկանու հարց տալու, խոկ եթե հարց էլ տան, ապա՝ քիչ:

Ուստի, առաջինը, որ պահանջվում է ուսուցչից Յ դաշտի սեփական, մորից ստացած՝ խոսքի վոճն է: Սովորիր քերականությունը, որպեսզի խոսակցությունդ ուղիղ լինի, բայց խոսիր բնական, սովորական լեզվով:

Ես պետք է ասեմ, որ ուսուցչական աշխատանքը ամենադժվար աշխատանքներից մեկն է: Ինձ մինչև խոկ թվում է, որ հարկավոր է ուսուցիչ ծնվել: Ես խոսում եմ բառիս խական իմաստով ուսուցչի մասին: Ոմանք շատ գիտեն: Ես գիտեմ բազմաթիվ մարդիկ, որոնք հիմանալի կերպով տիրապետում են առարկային, սակայն եթե այդպիսի մարդուն ուսուցիչ նշանակեք, նա չի կարողանա իր առարկան լավ շարադրել: Պետք է ոչ միայն իմանալ առարկան, այլ և պետք է կարողանալ դա այնպես շարադրել, որ ունկը դիրքությունը լավ յուրացնեն:

Այդպես ուրեմն, ես ել հենց կարծում եմ, որ ամենից առաջ հարկավոր է, որ բնուն նորմալ լինի: Երեխաներին մի՛ սովորեցրեք տրաֆարետի, պատրաստի ֆորմուլաների, —այդ նրանց մի ականջից մտնում, մյուսից դուրս է գալիս:

Եթե դու խոսում ես, ապա ուրեմն խոսիր քոնք: Բառերն ուրիշ կլինեն, խոկ էությունը՝ միենույնը: Եվ ահա կտեսնես, մարդիկ էլ միքիչ ավելի ուշադրությամբ ականջ կդնեն: Հարկավոր է, որ խոսքը տեղին ու ժամանակին առիշ, որպեսզի ինքն իրեն բղխի: Խոկ այստեղ այնպես է ստացվում, որ մարդ մեխանիկորեն է խոսում: Հարկավոր է, որ ոչ թե մեխանիկորեն, այլ օրգանական կերպով բառերը տեղան, որ դրանք քո միտքն արտահայտեն:

Պետք է խուսափել պատրաստի ձեակերպումներով խոռոշուց, երբ մարդ հիշողությամբ է վերջնում, և ոչ թե ուղեղի միջոցով մշակում: Այս լեզուն, որով դուք բնակչության հետ խոսում եք, դարձրեք պարզ-հասարակ լե-

զու, ձեր լեզուն, գործածելով բնական ոճ: Եթե ոճն անշնապական է, ապա ստացվում ե վանող տպավորություն: Զեզնից շատերը հավանորեն հիշում են (գուցե և ոչ) հին տիրացուհիներին, որոնք շրջում էին վանքերը: Նրանց թիւը մեծ էր մեր երկրում ռելուցիայից առաջ: Եթե նրանցից մեկին լսում էիր, ապա երկրորդը ճիշտ նույնն էր բարձրացնում: «Տե՛ր, աստվածամայրն արժանացույց տեսանել զսուրբ երես յուր»: Զի կարելի նրանց նմանվել: Մեր լեզուն հարուստ է և դուք մի՛ կոտրատեք այն, մի՛ փշացրեք և երեխաներին սովորեցրե՛ք դրան: Երեխաներին ի՞նչպես սովորեցնել դրան: Պահանջեցե՛ք, որ նրանք նախ մտածեն, հետո խոսեն, և ոչ թե խոսեն, հետո մտածեն: Այս է հիմնականը:

\* \* \*

Ահալասիկ այն խնդիրները, որ ծառացած են մեր ուսուցչության առջև: Խոկ ամբողջությամբ վերցրած մեր ուսուցչությունը պետք է է՛լ ավելի կուլտուրական լինի: Կուլտուրական ոչ միայն այն տեսակետից, որ ուսուցիչներն խմանան իրենց առարկան, այլ բառիս ընդհանուր իմաստով կուլտուրական, որ ուսուցչության բուն խոկ պահանջմունքները լայն լինեն: Դուք ինքներդ տեսնում եք, որ և՛ քաղաքային և՛ գյուղական բնակչությունը, որի կուլտուրական աճումն առաջ է գնում վիթիարի քայլերով, կուլտուրական մեծ պահանջներ է ներկայացնում:

Մեր կյանքը շարունակ բարդանում է, նա պահանջում է ավելի ու ավելի բարձր «առաստաղ» մեր բոլոր աշխատողներից՝ բոլոր ասպարեզներում: Եթե այժմ ուսուցչի «առաստաղը», օրինակ՝ Փրկու մետր է, ապա ուրեմն հարկավոր է, թու դպ. Այնի պոնե նպատ ու կես մետր:

Ընկերներն այստեղ խնդիրն լրագրերի պակասության մասին: Անչուշտ, լրագրերի կանչեք կա: Բայց այնուամենայնիվ, եթե ուղարկում, եթ, ապա ձեր կուլտուրայի աճման համար լրագրերը հանդիսանալու համար հարկավոր է քաղաքական

կողմնորոշման համար առլյալ մոմենտում, ընթացիկ կարքիների համար: Իսկ կուլտուրան բարձրացնելու համար պետք է դիմել կուլտուրայի պատմությանը, մարդկության ամբողջ կուլտուրական ժառանգությանը: Հարկավոր է խմանալ ուսանեան գրականությունը և առանձնապես զեղարքիստական գրականությունը: Առանց գրան յուշ զնայչի: Աւատցիչը զործ ունի մարդկային նյութի հետ, ամենաերիտասարդ և ամենապաշտառակ նյութի հետ: Գեղարքիստական գրականությունը—զա մարդկանց տիպերի ամենահարուստ պահորաման է, զոնե ևս այլպես իմ կարծում: Գեղարքիստական գրականության մեջ զորք տեսնում էք մարդկային տիպի անվերջ այլազան գրություններում: Այդ պատճառով գեղարքիստական գրականությունն իմանալը—այդ համարյաց ձեր պրոֆեսորանալ պարտականությունն է: Աւատցի կուլտուրան բարձրացնելը—այդ առաջին հերթին գեղարքիստական գրականություն խմանալն է: Նա ամենից ամելի է հարստացնում մարդուն, հնարավորություն է տալիս (ես դատում իմ իմ փորձից) մաշտուն՝ ամելու, ամելի հականակու մարդկանց:

Ահա այն ամենը, ինչ որ Ես ուզում էի ձեզ ասել: Կյոսել  
կարելի է անլեռջ, ցավոտ հարցեր ձեզնում շատ ունեք:  
Ամենաշատ լորս, ամենաշխախնականը, որ ևս ուզում էի  
ասել, զուք լսեցիք: Ես կուպեի, որ տուն վերադառնալուց  
հետո դուք չժառանաք իմ ցանկությունները: (Որտեղնդրան  
ծափակարգ յունեներ):

Ս. ի. Կալիմին, Սովորական  
ինսեկտոբայութեան խնդիրների  
մասին, էջ 31—45,  
Պետական հրատ., 1939 թ.:



ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

٤٢

Մարքսիզմ-լենինիզմի գասավանելման մասին։ Ճառ՝ բուհերի մարք-սիզմ-լենինիզմի տարբանների ղեկավարների համաժութենական երկրորդ խորհրդակցությանը 1940 թ. հուլիսի 4-ին	3
Ճառ ինտելլեկտների ներկայացուցիչների, ակադեմիկոսների, ինժեներների, բժիշկների, արտիստների, նկարիչների Թրիբունիի համագագագային ժողովում, 1940 թ. մայիսի 27-ին	18
Ճառ գրքոցական երիտասարդության և պիտույքների մեջ տարգմոցախառնքի դժուլ Համլետի մարզկամերի քարտուղարների հետ Համլետի Կենտրոնի ունեցած խորհրդակցությանը 1940 թ. մայիսի 8-ին	28
Ճառ Մոսկվա քաղաքի Բառումանի ուսունի լրիվ միջնակարգ դպրոցների ութերորդ, իններորդ և տասերորդ դասարանների աշակերտությանը 1940 թ. ասորիւ 7-ին	39
Ճառ քաղաքային և գյուղական դպրոցների ղերազանցիկ ուսուցչների՝ «Սպատակագործության պատրության զուռմարած» խորհրդակցությանը 1938 թ. ղեկավաների 28-ին	50
I. Մարքսիզմ-լենինիզմի թեորիային տիրապետելու մասին	50
II. Ուսուցչի ղեկավաներ ինդիքսն է նոր մարդու—սացիալիստական հասարակության քաղաքացու դաստիարակումը	59
III. Իր ղեկավաները ժողովրդական մասսաների մեջ տանելը, հասարակական կյանքին ամեն օր մասնակցելը ամեն մի ուսուցչի պարտականությունն է	64
IV. Ուսուցչին իր խոսքի մեջ կենդանի հոգի և միտք ոկտոք է զնի	67

Թարգմանիչներ Հ. Հակոբյան և Հ. Տեր-Հովհաննիսյան

Խմբագիր Գ. Հայրյան

Տէի, խմբագիր Ս. Խաչատրյան

Սըբագրիչ Ա. Մանուկյան

Կանաքու սբբագրիչ Լ. Աբովյան

---

Հրատարակչության № 847, պատվեր № 318, զակազ № 318

Տիրած 5000, տիրած 5000

Հանձնվել է արտադրության 21/X 1940 թ.

Ստորագրված է տպագրելու 2/XII. 1940 թ.

Գինը 80 կ., կազմը 50 կ.

---

Քաղաքական գրականության պետական հրատարակչության տպարան  
Երևան, Ալեքսանդրյան № 65

Տիգրագիր Գօն. աշխ. լիտերատուրա, Երևան, Ալլավերդյան № 65

«Ազգային գրադարան



NL0225593

45. 560

ЧИСЛ 1 Н. 30 Ч.

М. И. КАЛИНИН

ВОПРОСЫ КОММУНИСТИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ

Государственное издательство политической литературы  
Ереван • 1930